ԼԵՆԻՆԻ ՀՐԱՊԱՐԱԿ. ԵՐԵՎԱՆ, 1956 թ.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ 100. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

KONRAD ADENAUER STIFTUNG

Կոնֆերանս և ցուցահանդես՝ Խորհրդային Հայաստանի 100-ամյակի առիթով

Սբ Էջմիածին
2020

Գրքույկի շապիկին՝ Տ.Տ. Գևորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն
Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների հետ, Սբ Էջմիածին, 1945 թ.



Օրհնութիւն Սուրբ Էջմիածնէն

Ողջոյն հայոց եղբայրաց և քրոջս դստերանի Սայաթ-Նովի, մեր տեղեկատու տարաբնակ եկեղեցականաց ողջոյնով է պատրաստ եղ Վեհարանս քաղաքացիս, որոց ու շրջանի հոգեւոր լուսատու մեր եպիսկոպոս:

Մեր տեղեկատու, որ տիրոջ 1915-ին Սպիտակաբերդ հրդեհած սև օրերին ոչնչի չձայնչ մեր դատաստանաց ցեղասպանութիւնը. մեր տեղեկատու որ սարեմտեան Վերին Հայքի 1918-ին Մարտիրոսաց Կարմրաքաղաքն հերոսդ. մեր տեղեկատու, որ ասում մեր քրոջս դստերքրոջ և վերջ յանձնում ու շարքում Սրբազանական հոգեւոր Գանձարանս մեր հերոսդ և հոգ եպիսկոպոսի հանդերձ խաչագրութիւնս և սպասավորութիւնս սպիտակեալ ծոց. Հոգեւոր տեղեկատու, սիրտ ազիզդ մեր է եղեր հայկական կամքերիս, փանանգում եր հիշատակդ հայոց ազգի ճիրանքին, և եպիսկոպոս դարձաց հոգեւոր լուսատիս, հանգամանքի եր ուսումնարանիս, հանգամանքի եր հանգանակի, հանգամանքի եր սանդի կիրճ ու կարգաց դասերիս:

Օրհնութիւն և հանգստանան հոգեւոր տեղեկատուիս

9 X 1968

Վազգեն

Յակով Զարոբյանը Սարդարապատի հուշահամալիրում

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ 100. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Մյուռոնօրհնություն, 1969 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

2020 թվականը Հայաստանի Հանրապետության համար շատ տարբեր առումներով «հիշարժան» էր: Մի կողմից, ուղիղ 100 տարի առաջ էր, որ ժողովրդավարորեն լեգիտիմացված Հայաստանի Առաջին Հանրապետությունը խորհրդայնացվեց և 70 տարի մաց Խորհրդային Միության կազմում: Մյուս կողմից՝ Լեռնային Ղարաբաղի համար սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը տեղի ունեցած պատերազմի հետևանքները, ստվերեցին հանրային դիսկուրսը և քաղաքական ակտիվությունը: Այս պատերազմը շարունակում է գերակշռող թեմա մնալ քաղաքական ու հասարակական կյանքում ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև, իհարկե, Հայաստանի Հանրապետությունում:

Ներկայումս Հարավային Կովկասի բոլոր երեք պետություններն էլ անդրադառնում են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կարճ գոյատևած, անկախ հանրապետություններին՝ որպես արդի հիշողության մշակույթի մի մասի: Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում և համատեքստում առաջացած բոլոր երեք հանրապետություններն էլ կարճ են գոյատևել: Քաղաքացիական պատերազմում բոլշևիկների հաղթանակի շնորհիվ 1920-1921 թվականներին տեղի ունեցավ այս երկրների աստիճանական «խորհրդայնացումը»: 1922-1936 թվականներին Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանն ստեղծեցին այսպես կոչված «Անդրկովկասյան միությունը», որն այնուհետև լուծարվեց՝ վերածվելով խորհրդային սոցիալիստական երեք հանրապետությունների: Խորհրդայնացումն ինչպիսի ազդեցություն է ունեցել ներկայիս Հայաստանի Հանրապետության ազգային առանձնահատկությունների պահպանման ու զարգացման վրա: Դրանից հատկապես տուժել էր Եկեղեցին:

Սույն գրքույկով հրատարակված հոդվածները և աղբյուրագիտական նյութերը կոչված են քննարկման դնելու «եկեղեցու և պետության» միջև սկզբնապես բարդ և հակասական հարաբերությունների որոշ հայեցակետեր: Ազգային անկախության հասնելուց շուրջ երեսուն

աստվածակառույց Սուրբ Էջմիածինը հաղթանակեց, փառքով ու պատվով դուրս եկավ մղձավանջից՝ պահպանելով աշխարհասփյուռ հայության ճշմարիտ հայրենասիրությունը, ազգասիրությունն ու եկեղեցասիրությունը, որոնք տարրալուծվելով դառնում են աստվածսիրություն. «Հայաստանեայց Եկեղեցին՝ իր ծագումով, իր պատմութեամբ եւ իր հոգեբանութեամբ անհայրենիք չէ, ապազգային չէ: Աւելին, մեր Եկեղեցին, բոլոր ժամանակներու մէջ, զօրավիգ կանգնած է Հայ պետականութեան եւ յաճախ հանդիսացած է ազգութեան դրօշակ, Հայրենիք կերտող ուժ, երբեմն իր նահատակութեան իսկ գնով»[1]:

Հայոց Եկեղեցին նաև Խորհրդային Միությունում պայքարելով իր անկախության ու իրավունքների համար՝ այդպես պայծառ պահեց իր հարազատ ազգի սերունդների մտքում ու հոգում անկախության ու ազատության տեսիլքը, ինքնիշխան պետություն կերտելու կամքն ու վճռականությունը, որն սկսվեց 1990 թ. օգոստոսի 23-ի Հռչակագրով և իրականություն դարձավ 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեով. «...Ինքը՝ Հայ Եկեղեցին, իր սկզբնաւորման ժամանակներից մինչև մեր ժամանակները պահել պահպանել է անկախութեան գաղափարը, հոգևոր կեանքի մակարդակի վրայ: Դարեր շարունակ բռնատէրերի լծի տակ հայ հաւատացեալը ինքն իրեն զգացել է ազատ ու անկախ միայն իր Մայր Եկեղեցու կամարների ներքոյ:

Արդար է հետևաբար, որ Հայ Եկեղեցին ճանաչուի նախավկան, նախակարապետը մերօրեայ պետական անկախութեան»[2]:

---

[1] Նույնը, էջ 4:

[2] «Էջմիածին պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի», Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 1991, էջ 17:

պատմական մի շարք վանքեր, քաղաքային ու գյուղական եկեղեցիներ: Դարձյալ սկսում է տրոփել Հայոց Եկեղեցու սիրտը՝ Հոգևոր Ճեմարանը: Այդ ամենի հետ մեկտեղ ակտիվանում են արտաքին միջեկեղեցական հարաբերությունները, հոգևորականաց փոխայցելությունները: Նորովի է շնչում Հայոց Եկեղեցու հոգևոր-մշակութային կյանքը: Իսկ Սուրբ Էջմիածինը դառնում է մի յուրօրինակ Վերնատուն՝ իր գորովալից գրկում ընդունելով հայ և օտարազգի գրողների, գիտնականների, արվեստագետների, երաժիշտների և այլոց:

Ավելին, Տ.Տ. Գևորգ Զ. և Տ.Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսները հերոսական ջանքեր են գործադրում, մանավանդ Սառը պատերազմի ողջ շրջանում, երբ հակախորհրդային ուժերի մեքենայություններով քայքայվում էր հայության միասնությունը և պառակտվում եկեղեցական-վարչական կառույցը՝ աշխարհասփյուռ հայությանը շաղկապել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Մայր Հայրենիքին: Եվ մեծավ մասամբ շնորհիվ Հայոց Եկեղեցու առաքելության Խորհրդային Հայաստանը ողջ հայության համար դառնում է բաղձալի Հայկական պետություն և տենչալի Մայր Հայրենիք. «Վերածնած մեր Երկիրը, Հայաստան, իրականացած երազն է բովանդակ հայ ժողովուրդին, ու բովանդակ Հայ Եկեղեցիին»[1]:

Ե. դարից ի վեր ամենայն ինչ նույնն է՝ հայ հոգևորականի համար սրբազան արժեքներ են Հայրենիքը, լեզուն, ազգը, պետությունն ու պետականությունը: Եվ եթե նույնիսկ պետության գլխին կանգնած է «հիվանդ» առաջնորդ կամ քաղաքական ուժ, փույթ չէ, նա չի՛ կարող մատնվել օտարի ձեռքը, նա չի՛ կարող փոխարինվել օտարով: Մանավանդ, եթե նույնիսկ հոգին՝ հավատքն ինչ որ առումով կաղապարվում է այդ նույն առաջնորդի կամ քաղաքական ուժի կողմից, սակայն դրանց գործունեության արդյունքում մարմինը՝ Հայրենիքը շենանում է, Ազգն ապրում խաղաղ, շինարար ու ստեղծագործ կյանքով՝ պահպանելով իր ազգային ինքնությունը, Եկեղեցին ծով համբերությամբ լուռ աղոթում է, անտես գործում, որպեսզի Գողգոթային հաջորդի Հարությունը՝ լինի հոգու (Եկեղեցի) ու մարմնի (Հայրենիք-Ազգ) կատարյալ ներդաշնակություն, առողջություն:

Իրավամբ, Խորհրդային Հայաստանում, ծանր խաչելությունից ու կորուստներից հետո, այնուամենայնիվ եղավ Հարություն՝

[1] «Էջմիածին պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի», Ապրիլ, 1970, էջ 5:

տարի անց խորհրդայնացման ազդեցության վերաբերյալ դիսկուրսը թափ է առել նաև նախկին խորհրդային մյուս հանրապետություններում: Հայաստանի Հանրապետությունում ևս այս քննարկումը ցույց է տալիս, որ խորհրդային իշխանության շրջանի վերաբերյալ ընդհանրական դատողություններն այլևս բավարար չեն մոսկովյան կենտրոնականի և խորհրդային հանրապետությունների միջև փոխհարաբերությունները բացատրելու համար: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ լինելով ինքնիշխան հաստատություն և մարմնավորելով հայ ազգային ինքնությունը, խորհրդային տարիներին հիանալի դիվանագիտությամբ պահպանեց նաև հայ ժողովրդի ազատության ու անկախության տեսլականը, և հետագայում հոգատարեց Հայաստանի անկախության շարժմանը:

Արդեն մի քանի տարի է, ինչ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը սերտ, հուսալի համագործակցություն է իրականացնում Հայ Առաքելական Եկեղեցու հաստատությունների հետ: Հիմնադրամի համար «միջկրոնական երկխոսության» խթանումը կենտրոնական թեմաներից մեկն է Հայաստանում՝ իր կողմից իրականացվող բազմաթիվ միջոցառումների շարքում: Մեզ համար պատիվ է, որ այս գրքույկով կարող ենք ևս մի ավանդ ունենալ այդ միջոցառումների համատեքստում: Մինչ այժմ շատ արդյունավետ է եղել հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվի և թանգարանների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ որպես Հայ Եկեղեցու հոգևոր կենտրոնի հետ համագործակցությունը: Խորհրդայնացման, ինչպես նաև Հայ Եկեղեցու և խորհրդային պետության միջև հարաբերությունների համատեքստում պատմական խորապատկերի նկարագրություններից զատ, հոդվածները պարունակում են այն ժամանակ դերակատարում ունեցած անձանց վերաբերյալ նաև խիստ հետաքրքիր վերլուծություններ, որոնք մինչ օրս այսկերպ դեռևս չեն արծարծվել գիտական դիսկուրսներում:

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը բոլոր ընթերցողներին մաղթում է հետաքրքիր ընթերցանություն:

ԴՐ. ԹՈՄԱՍ ՇՐԱՊԵԼ

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի
«Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս»
տարածաշրջանային ծրագրի տնօրեն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2020 թ. լրացավ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 100-ամյակը: Նշանավոր մի հոբելյան, որը հասարակական և պատմագիտական մտքի համար ունի դրական և բացասական ընկալում ու մեկնաբանություն:

Անցյալ տարի, Հայաստանյան իրականության մեջ առկա համավարակի և ապա Արցախյան պատերազմի պատճառներով, այդ պատմական դեպքն ըստ արժանվույն չհիշատակվեց, անդրադարձ չունեցավ:

Ուրախալի է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արխիվի և «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի համագործակցության շրջանակներում կյանքի կոչվեց «Խորհրդային Հայաստան 100. Եկեղեցին և Պետությունը» նախագիծը:

Հոդվածների և արխիվային նյութերի սույն գրքույկը հիմնականում ներկայացնում է Խորհրդային Հայաստանի կյանքի համընդհանուր պատկերը, ի մասնավորի Հայոց Եկեղեցու հանդեպ վարվող քաղաքականությունը, որն իր սկզբնական ծայրագույն թշնամականից աստիճանաբար վերածվեց հանդուրժելիության: Անդրադարձներ կան նաև Խորհրդային Հայաստանի ղեկավարների և տարբեր կառույցների ծավալած գործունեությունների վերաբերյալ՝ մասնահատուկ ժամանակահատվածներում:

Հրապարակվող արխիվային նյութերն էլ առարկայապես են տարեգրում Խորհրդային Հայաստանի պատմությունը, որն իր մեջ ամփոփում է շատ ողբերգական երևույթներ ու իրագործումներ, սակայն առավել շատ են գնահատարժան ու հիշատակարժան գործերը, որոնց թվում նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ առնչվածները:

Տնօրենություն
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արխիվի

Եկեղեցու ծավալված բռնություններում և Տ.Տ. Խորեն Ա. Մուրադբեկյան Հայոց Հայրապետի սպանության գործում...

Թեպետև գրությունը հասնում է Ստալինին, սակայն վերջինս ընթացք չի տալիս իր անմիտ ենթակաների որոշմանը. «...Գրիգորի Արտեմիչը հույս ուներ ժամանակ շահել: Եվ նրա հույսերը սխալ չէին: Չի անցնում անգամ մեկ ամիս. հատուկ կապով նրա հետ կապվում է Ստալինը.

- Ընկեր Արութինով, Դուք դեռ պնդո՞ւմ եք կաթողիկոսությունը փակելու հարցը:

Հարցի դրվածքն Արութինովին արդեն հուշում էր պատասխանը.

- Ո՛չ, Իո՛սիֆ Վիսարիոնովիչ, չեմ պնդում:

- Դե ուրեմն, լավ:

Այսպիսով՝ էջմիածինը լուծարելու հարցը փակվում է»[1]:

Արդարև, որքան էլ դաժան էր ԽՍՀՄ առաջնորդ Ստալինը, այդուհանդերձ նա իմաստությունն է ունենում պահպանելու համայն հայության հոգևոր կենտրոնը և ԽՍՀՄ օրենքների սահմանած իրավունքների շրջանակներում վերակազմակերպելու Հայոց Եկեղեցու գործունեությունը: Իսկ այդ առաքելության համար Խորհրդային Միության առաջնորդի կողմից ընտրվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Գևորգ արքեպս. Չեորքչյանը, ով Տ.Տ. Խորեն Ա. Հայրապետի նահատակությունից յոթ տարի անց՝ 1945 թ. ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներից ի վեր էականորեն փոխվում է Խորհրդային Հայաստանի վերաբերմունքը Հայոց Եկեղեցու նկատմամբ: Եվ սա, թերևս, պայմանավորված էր Հայաստանի ղեկավարների մարդկային հատկանիշներով, ինչպես նաև՝ Խորհրդային Միության մթնոլորտում տեղի ունեցող փոփոխություններով:

Այո, թեև պահպանվում են ընդհանուր սահմանափակումներն ու վերահսկողությունները, սակայն Եկեղեցուն տրվում են որոշակի իրավունքներ և ազատություն[2]: Իսկ Եկեղեցին էլ ավետարանական խորագիտությամբ՝ «երթայք, տուք զկայսերն կայսեր» (Մատթ. ԻԲ. 21), օգտվելով ստեղծված բարենպաստ վիճակից, սկսում է վերաշինություն ապրել: Որոշապես բարեզարդվում է Մայր Աթոռը, վերաբացվում են

---

[1] Նույնը, էջ 131:

[2] Տե՛ս «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության (1938-1955 թթ.), Գիրք Զ, Գէորգ Զ Չորէքչեան Կաթողիկոս Ամենայն Հայոց», կազմեց՝ Սանդրո Բեհբուդյան, Երևան, 1999, էջ 256-258:

Հայաստանի Կոմկուսի(բ) Կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանի ստորագրությամբ 1938 թ. օգոստոսի 4-ին թիվ 558 գրությունն է ուղարկվում ՀԱՄԿ(Բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ի.Վ. Ստալինին. “ЦК КП(б) Армении, обсудив вопрос об Эчмиадзинском монастыре и католикосате решил,- ввиду того, что имеюшиеся материалы изобличают Эчмиадзинский католикосат в активной борьбе против Советской власти и армянского народа – закрыть Эчмиадзинский монастырь, превратив его в музей, выборов нового католикоса не производить и ликвидировть центр армянского духовенства – Эчмиадзинский католикосат.

Просим ЦК ВКП(б) утвердить”[1]:

Դավաճանական, արգահատելի, ի վերջո ապերախտ այս գրության հեղինակն արդյո՞ք Գրիգոր Հարությունյանն էր, նա, ում հայ ժողովուրդն ի դեմս իր մեծագույն զավակներից Ավետիք Իսահակյանի կոչել էր «Գրիգոր Շինարար»... Այն, որ նա մասնակցել է քննարկմանն ու ստորագրել գրությունը՝ ստույգ է: Սակայն որոշ է, որ այդ վճռի և գրության հեղինակներն ուրիշներն են, որոնք գործել են հանձին ՀՍԽՀ Ներքգործժող կոմիսար Վիկտոր Խվորոստյանի: Իսկ վերջինս գործակալն էր ԽՍՀՄ Ներքգործժողկոմ Ն. Եժովի. «Հուլիսի 30-ին Խվորոստիանը Արութինովի սեղանին է դնում «Էջմիածնի կաթողիկոսության մասին» Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի որոշման նախագիծ՝ պահանջելով հարցի անհապաղ քննարկում բյուրոյում, և, իբր, իմիջիայլոց, ակնարկում է, որ փաստաթղթի պատճենն ուղարկվել է Եժովին: Օգոստոսի 4-ին ՆԳԺԿ պետի ճնշման ներքո Կենտկոմի առաջին քարտուղարը, այնուամենայնիվ, հավաքում է բյուրոն:

...Արութինովի պնդմամբ որոշման մեջ տող է ավելացվում. «Խնդրել ՀամԿ(բ)Կ Կենտկոմին հաստատել»: Խվորոստիանը ուզում էր հակաճառել՝ դա, իբր, տեղական նշանակության հարց է, ինքներս գլուխ կբերենք: Ի պատասխան՝ լսում է. «Էջմիածինը, որպես հայության հոգևոր կենտրոն, ունի միջազգային կշիռ և նշանակություն: Ահա թե ինչու այդ հարցը պետք է համաձայնեցնել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հետ»[2]:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այդ ողբերգական տարիներին կար ևս մի չարագործ՝ Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Լ. Բերիան: Միանշանակ է, որ նա ևս մաս և բաժին է ունեցել ընդդեմ Հայոց

[1] ՀԱԱ, ֆ.1, ց.18, գ.79, թ. 41-42:

[2] «Գրիգոր Շինարար: Հուշեր Գ.Ա. Հարությունյանի (Արութինով)՝ 1937-1953 թթ. Հայաստանի կոմկուսի 1-ին քարտուղարի մասին», կազմող՝ Նամի Միկոյան, Երևան, 2016, էջ 131:

ԽՍՀՄ Մարտնչող անաստվածների միության «Բեզբոժնիկ» ամսագիրը, 1929 թ.

Ավագ Ա. Հարությունյան
պատմական գիտությունների թեկնածու

ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. (ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Պատմության ընթացքում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները ընթացել են ոչ միանշանակ կերպով: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին (այսուհետ՝ ՀԱԵ) մսաց ժողովրդին թիկունք, և անգամ խորհրդային պետականության ամրապնդման աջակից, դրանով պայմանավորելով բուն ժողովրդի անվտանգության ու բարգավաճման տեսլականը: Չնայած մաքառումներին և տարատեսակ զրկանքներին՝ հենց այդ էր ՀԱԵ առաջնահերթ չափորոշիչը:

Պետություն-եկեղեցի հարաբերակցության ուսումնասիրումն այժմ հատկապես արդիական է, քանզի աթեիստական պետականության պայմաններում վերջնական իրավաքաղաքական ձևակերպում ստացան պետությունից եկեղեցու և եկեղեցուց դպրոցի տարանջատման, խղճի ազատության սկզբունքները: Այդ ամենի իմացությունը հնարավորություն կընձեռի առավել հստակ պատկերացնել անկախ ՀՀ-ում գլխավոր կրոնական կառույցի՝ ՀԱԵ հարաբերակցությունը պետական համակարգի հետ, նրա ունեցած տեղն ու դերակատարությունը հասարակական-քաղաքական կյանքում:

Հայոց պատմության մեջ Եկեղեցու տեղի ու դերի հարցի քննարկումը 1920-1930-ական թվականների և արդի պայմաններում կարևոր տեղ ունի հասարակական զարգացման ընկալման և հեռանկարի ուրվագծման առումով: Հիմնական դրդապատճառներից է հոգևորի փնտրտուքը, նյութական գերիշխանության հաստատման գլոբալ պայմաններում այլընտրանքի կարևորումը, անցումային շրջանում ՀԱԵ միջոցով բարեփոխումների հույսն անհատի և հասարակության-պետության աշխարհայացքային նոր դրույթների վերաձևման տեսլականով, արդեն ժամանակակից իրողություններին հարմարեցված ու համապատասխանացված:

Արդի եկեղեցական-պետական հարաբերակցության քաղաքական մոդելի ձևավորման գործընթացը ու խնդիրների լուծման գործիքակազմը, հասարակության մեջ կրոնական պատկերացումների հանդեպ

Հալածանքներն իրենց բարձրակետին են հասնում 1937-1938 թթ.: Եվ նույնիսկ այդ սոսկալի իրավիճակում Հայոց Եկեղեցին՝ հանձին Տ.Տ. Խորեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի երես չի՛ դարձնում Խորհրդային Հայաստանից, թշնամի չի՛ դիտում: Այլ շարունակում է հայրաբար խոսել, սիրով վերաբերվել, համբերատար բացատրել. «Խորհրդային իշխանությունը մեր երկիրը ոտք կոխելու օրից, - Տ.Տ. Խորեն Ա. Հայրապետը գրում է ՀՍԽՀ ներքգործժող կոմիսար Վիկտոր Խվորոստյանին, - էջմիածինը համարում է նրան իր հարազատ պետությունը և միշտ աղոթել է նրա հարատևության և անսասանության համար: Էջմիածինը գիտակցել է միշտ, որ հայ ժողովուրդը իր ֆիզիկական գոյությունը նույն խորհրդային իշխանությանն է պարտական, որ նա է հայ ժողովրդի մտավոր և տնտեսական առաջադիմության մեծապես զարկ տվողը և նրա երջանկության ուղին հարթողը: Եվ այդ է պատճառը, որ էջմիածինը անկեղծորեն սիրել և սիրում է իր հարազատ խորհրդային իշխանությունը և միշտ ձգտել ու ձգտում է ընդհանրապես խորհրդային իշխանության և մասնավորապես իր հարազատ պետության և Հայրենիքի հմայքը բարձրացնել գաղութահայության աչքում: Այս ընթացքն է ունեցել մեր նախորդը, որով անշեղ ընթացել և ընթանում ենք նաև մենք հայրապետական գահ բարձրանալու օրից սկսած: Այս ուղին է, որով ընթանալ պատվիրել ենք մեր Հայրապետական կոնդակներով մեր արտասահմանյան բոլոր ներկայացուցիչներին»[1]:

Դժբախտաբար Հայոց Հայրապետի անկեղծ համոզմունքը և բարյացակամ վերաբերմունքը մնում են անպատասխան. ինչպես Սեր Աստված խաչվեց կուրացյալ ամբոխի կամքով ու ձեռքով, նույնպես էլ նահատակվում են Տ.Տ. Խորեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը և հարյուրավոր հոգևորականներ: Բազմաթիվ եկեղեցականներ էլ հազարավոր հայ մտավորականների ու տարբեր գործիչների հետ միասին բանտարկվում են ու աքսորվում:

Ամեն ինչ ավարտված է՝ Հայոց Եկեղեցին ու եկեղեցականը ոչնչացված են, թերևս համոզված էին հայ և օտար բոլշևիկ պաշտոնյաները: Եվ այդ վստահությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմը կազմակերպում է քննարկում և որոշում փակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ վերածելով թանգարանի, նոր Կաթողիկոսի ընտրությունների անցկացում չարտոնել և լիկվիդացնել հայ հոգևորականության կենտրոնը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը: Այս հրեշավոր՝ հայրենադավ ու ապազգային վճիռն իրագործելու համար

[1] Նույնը, էջ 324-325:

Արդարև, ա՛յս էր Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «գործնականապես ապացուցված և որպես անշեղ ուղեցույց ընդունած» սկզբունքային ընդհանրական վերաբերմունքը խորհրդահայ իշխանության նկատմամբ: Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, Հայոց Եկեղեցին նաև չէր լռում. օրինական պահանջներ էր առաջադրում և բողոքի արդար ձայն բարձրացնում մինչև վերին պաշտոնյաները՝ Երևանից Մոսկվա. «Հայ հավատացյալ համայնքների կողմից ինձ ուղղած դիմումների հիման վրա, - Տ.Տ. Գևորգ Ե. Հայրապետը գրում է ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահ Արտաշես Կարինյանին, - հաճախ ես ևս դիմել եմ այնպիսի խնդիրներով ու բողոքներով անմիջապես կամ իմ ներկայացուցիչների միջոցով և միշտ էլ այդպիսի դեպքերում իմ միակ ջերմ իղձը և փափագն է եղել վերացնել, հարթել տալ օրինական ճանապարհով հայ հավատացյալ համայնքների դժգոհությունները և բողոքները և հույս եմ ունեցել և ունեմ, որ խորհրդային բարձր իշխանությունը կբավարարի այդպիսի օրինական դիմումները թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում և թե՛ Ադրբեջանում: Անկարելի է ենթադրել, որ սովետական բարձր պաշտոնյաների և լուրջ գործիչների կողմից այսպիսի օրինական դիմումներին կամ բողոքներին այլ մեկնություն տրվի և հակախորհրդային միտումով բացատրվի, ինչպես ոմանք աշխատում են ցույց տալ, դժբախտաբար»[1]:

Թեև Խորհրդային Հայաստանն ի դեմս որոշ պաշտոնյաների տարբեր առիթներով իր շնորհակալությունն էր հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Մայր Աթոռին և խնդակցություն հայտնում, «որ Էջմիածինը հետևում է իրենց գործունեության, ընդունում է խորհրդային իշխանության շինարարությունը, գնահատում է նրա խաղաղասիրական ոգին և կուլտուրայի ու կրթության զարգացման հետապնդումը»[2], այլև խոստանում, որ «այսուհետև կհարթվեն այդ գոյություն ունեցող անհարթությունները և դեպի Էջմիածինը կատարյալ վստահություն տածելով՝ կբավարարվեն նրա օրինական խնդիրները»[3], այդուհանդերձ գործնականում էական ոչինչ չէր արվում: Ավելին, խորհրդահայ պաշտոնյաները, շատ հաճախ նաև ուղղակի ճնշման ներքո միութենական որոշ մարմինների ու ազդեցիկ իշխանավորների, հետևողական կերպով աշխատում էին իսպառ ոչնչացնել Հայոց Եկեղեցին՝ տաճարով ու եկեղեցականով հանդերձ:

[1] Նույնը, էջ 118:

[2] Նույնը, էջ 122-123:

[3] Նույնը, էջ 123:

դիրքորոշումներն առավել ընկալելի կլինեն 1920-1930-ական թվականների փորձը հաշվի առնելու և դասեր քաղելու պարագայում:

Այդ փորձի իմացությունը միանգամայն ուսանելի է ներկայի ամբողջական և առարկայական պատկերացման տեսանկյունից, երբ նկատելի է եկեղեցու կախվածությունը իշխանությունների պետավարչական մեքենայից: Այն ապագայի համար պատմաքաղաքական և իրավական դասեր քաղելուց զատ նաև ներկայի մի շարք կենսական նշանակության հոգևոր-քաղաքական հարցերի պատասխաններ գտնելու հնարավորություն կտա: Ըստ այդմ, կրոնաեկեղեցական գործոնը հասարակական զարգացման գործընթացներում՝ հոգևոր, կուսակցական, սոցիալ-քաղաքական բաղադրիչներով, կարևորվում է պետականաշինության և պետաքաղաքական համակարգի ներդաշնակ կայունության հաստատման համապատկերում:

Քաղաքագիտական ուսումնասիրման կարոտ են հետևյալ հարցերը. ՀԱԵ նկատմամբ պետության բռնաճնշիչ քաղաքականության ձևավորման փուլերն ու առանձնահատկությունները, հակակրոնական քարոզչական-տեղեկատվական գործառույթ իրականացնող կառույցների կայացումն ու ընթացքը, ներեկեղեցական քայքայիչ գործունեության գործիքակազմը և դրսևորման ձևերը, կոմունիստական-խորհրդային ու եկեղեցական տեսակետների վերլուծությունը:

Պետությունից եկեղեցու անջատման դրույթի անվան տակ կոմկուսն իրականացնում էր հոգևոր-հանրային ինստիտուտ ՀԱԵ կործանումը և հասարակական կյանքում կրոնի իսպառ վերացումը, ինչը ոչ թե եկեղեցական-կրոնական հաստատությունների «հակահեղափոխական գործունեության» արդյունք էր, այլ նոր իշխանության ծրագրային, գաղափարախոսական մեթոդների հետևանք:

Կոմկուսի ձևավորվող ամբողջատիրական համակարգի պայմաններում պատմական զարգացումների գործընթացի և հասարակության ուսումնասիրումը հարկավոր է վերլուծել ինչպես ԽՍՀՄ, այնպես էլ ՀԽՍՀ առանձնահատկությունների ենթատեքստում: Այս ամենը դիտարկելով գաղափարական պայքարի տեսանկյունից, փաստենք, որ զուտ կրոնական գործոնին երկրորդական դեր էր վերապահված:

Պատմության ընթացքում պետություն-եկեղեցի հարաբերակցությունը լեցուն է եղել և փոխգործակցությամբ և իշխանական հալածանքներով: Առավել բարդ և վտանգահարույց է եղել 1920-1930-ական շրջանը, երբ աթեիստական պետությունը ՀԱԵ դիտարկում էր որպես «հակախորհրդային կազմակերպություն», և նպատակ հետապնդում վերջնականապես ոչնչացնել եկեղեցին և կրոնական հավատալիքները[1]:

Խորհրդային՝ հատկապես քննարկվող շրջանը, ՀԱԵ պատմության ամենաբարդ, վտանգներով լեցուն, ճակատագրական փուլ էր: ՀԱԵ զրկվել էր նախկին իրավունքներից և արտոնություններից, որ հատուկ է գլխավոր, տիրապետող եկեղեցուն: Ենթարկվելով համատարած բռնաճնշումների՝ որպես հալածյալ կառույց ստիպված էր նաև հարմարվել նորաստեղծ համակարգին և գոյությունը շարունակել արդեն պետական աջակցությունից և սեփական նյութական միջոցների բացակայության պայմաններում:

Ի տարբերություն ԽՍՀՄ մյուս հանրապետությունների, ՀԽՍՀ-ում ՀԱԵ միակ հանրապետական նշանակության կառույցն էր նաև բացասական հետևանքներով՝ պետությունը ողջ հարվածը կենտրոնացրել էր նրա վրա. ներեկեղեցական պառակտում, գույքի բռնագրավում, եկեղեցիների փակում, բռնաճնշումներ:

Պետություն-եկեղեցի հարաբերակցությունը դիտարկվում էր բացառապես միակողմանի կերպով՝ ինչքանով է ՀԱԵ հավատարիմ խորհրդային օրենսդրությանը, հեռու կամ զուրկ որևե հանրային-քաղաքական դերակատարություն ունենալու ցանկությունից, հնարավորությունից, ինչքանով է ծառայում և օգտակար խորհրդային իշխանություններին: ՀԱԵ նկատմամբ խորհրդային իշխանությունների քաղաքականությունը լավագույն դեպքում հանգեցվում էր արարողակարգային բնույթի:

Կրոնի և եկեղեցու դեմ պայքարում խորհրդային իշխանությունը առարկայաբար նաև սոցիալական հենարան ուներ՝ զանգվածների տարերային անաստվածությունը (անհավատություն), եկեղեցուց երիտասարդ սերնդի (արդեն բոլշևիկյան ոգով դաստիարակված) օտարումը, մարտնչող աթեիզմի համատարած քարոզչությունը[2], հավասարեցման սոցիալական սկզբունքներն էապես խարխլել էին սոցիալական վատթար վիճակում գտնվող ՀԽՍՀ սոցիալական նման խավերին:

Հռչակելով պետությունից եկեղեցու անջատումը, միևնույն ժամանակ, կոմկուսը ՀԱԵ ոչ միայն թեկուզ ֆորմալ անկախություն չշնորհեց, այլև չհրաժարվեց համակողմանի ազդեցությունից, մշակեց որոշակի

[1] Տե՛ս ՄԿՐՏՉՅԱՆ Գ., Պետություն-եկեղեցի հարաբերությունները Խորհրդային Հայաստանում, «Պատմություն և մշակույթ», 2016, էջ 89-96:

[2] Տե՛ս ԱՐԾՐՈՒՆԻ Գ. Հ., Մասսայական աթեիզմի զարգացումը Հայաստանում (1920-930թթ.): Ե., 1982:

Հայաստանի հանդեպ չէր արտահայտվում լոկ խոսքով. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մայր Աթոռը ջանում էին նաև նյութապես օժանդակել հայրենաշինությանը. «Խորհրդային Հայաստանի վերաշինության և հայ ժողովրդի մտավոր ու տնտեսական բարգավաճման գաղափարն ու ջերմ ցանկությունն է եղել միակ դրդապատճառը, որ ինքնաբերաբար մի շարք Հայրապետական կոնդակներով միշտ հորդորել եմ հատկապես արտասահմանյան մեր հոգևոր բարձր ներկայացուցիչների – պատրիարքների, թեմական առաջնորդների ու եկեղեցական-վարչական կազմակերպությունների միջոցով ի սփյուռս աշխարհի ցրված գաղութահայության նյութական լայն օժանդակություն հասցնել միշտ Խորհրդային Հայաստանի կառավարության՝ Հայաստանը վերաշինելու համար: Եվ այս ուղղությամբ է գործել էջմիածինը Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ տարուց սկսած և այս նպատակով էլ ընդհանրական և մասնակի կոնդակներ եմ ուղղել արտասահման՝ գաղութահայության անունով – 1921 թ. հոկտեմբերի 30-ի թիվ 417, 1922 թ. հունվարի 24-ի թիվ 54, 1922 թ. հունիսի 10-ի թիվ 431, 1922 թ. հունիսի 30-ի թիվ 498, 1923 թ. նոյեմբերի 1-ի թիվ 343, 1925 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 622 և այլն»[1]: Հատկանշական են նաև հետևյալ վկայությունները, որոնք Տ.Տ. Գևորգ Ե. Ամենայն Հայոց Հայրապետը ներկայացնում է ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին 1928 թ. հունիսի 29-ին հղած գրության մեջ. «Իրողություն է, որ Խորհրդային Հայաստանի ծանր շրջանում, 1921-1923 թվերի սովի ժամանակ, հայրապետական ընդհանրական և հատուկ կոնդակներով հայտնել եմ արտասահմանյան հայ գաղութներին, մեր պատրիարքներին և թեմական առաջնորդներին ու խորհուրդներին և հորդորել ու հրահանգել եմ բոլորին՝ շուտով օգնություն հասցնել Խորհրդային Հայաստանին, որ, անկասկած, ունեցավ իր զգալի հետևանքը, որի մասին ժամանակին բազմաթիվ պաշտոնական գրություններ ունեմ ստացած արտասահմանից:

Այնուհետև ևս նույնը շարունակել եմ Խորհրդային Հայաստանի վերաշինության և Հայաստանի Կարմիր խաչի օգտին: ...Երբ հնդկահայ կալկաթաբնակ հայտնի Աբգարյան գերդաստան[ի] անդամներից 1924 թվին ստացա տասն հազար անգլիական ֆունտ ստերլինգ «Ամենայն Հայոց Կաթողիկոսի բացարձակ բարեհայեցողության թողած գումարը»՝ բարվոք համարեցի հատկացնել Սարդարապատի մանկական տնտեսության կազմակերպության գործին և ամբողջ գումարը հանձնեցի Հայաստանի Ժողկոմխորհին»[2]:

[1] Նույնը, էջ 117-118:

[2] Նույնը, էջ 141:

իշխանավորների նկատմամբ: Եվ այսքանից հետո, ցավալիորեն, ի տարբերություն Խորհրդային Միության այլ հանրապետությունների՝ Հայաստանի բոլշևիկներն առավելագույն նենգությամբ ու դաժանությամբ էին մարտնչում ընդդեմ Հայոց Եկեղեցու, որ, կարծես, սերած չլինեին քրիստոնյա հայ ազգից. «Մեծ ցավ է ինձ համար, - 1929 թ. մարտի 4-ին Տ.Տ. Գևորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրում է ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին, - որ իմ հարազատ պետությունը, որ անկեղծորեն հետամուտ է հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը պաշտպանելու և՝ նորա մտավոր ու տնտեսական հառաջադիմության մեծապես զարկ տալով՝ նորա երջանկության ուղին հարթելու, նա է, որ հալածում է Հայ Եկեղեցուն, որ իր ամբողջ կյանքում ապրել է հայ ժողովրդի համար և նորա հետ, որ դարերի ընթացքում հալածանքներ ու նեղություններ է կրել նորա ֆիզիկական գոյությունը պահպանելու համար, նորա մտքի և հոգու լուսավորիչը հանդիսանալով՝ գոյության կռվի մեջ դիմացկուն է դարձրել նրան և ի պահանջել հարկին՝ իր արյունը թափելով՝ նահատակ եկեղեցու անուն է ժառանգել, հայ ժողովրդի անմոռաց սիրուն ու մեծարանքին արժանացել և օտարների հարգանքն եւ հիացմունքը վաստակել: ...Հայ Եկեղեցին, որ այսօր իր հարազատ պետության և հայրենիքի հմայքն է ձգտում բարձրացնել գաղութահայության աչքում: Մի՞թե այս բոլորի համար է, որ նա դարերի հալածանքից հետո վերստին հալածվում է իր հայրենիքում իր հարազատների ձեռքով այն ժամանակ, երբ բովանդակ համամիութենական եկեղեցական աշխարհը խաղաղություն է վայելում»[1], այլև՝ «Մի՞թե հավատամ, - գրում է Տ.Տ. Գևորգ Ե. Ամենայն Հայոց Հայրապետը, - որ հայ բազմատանջ ազգից ելած զավակները, ինչ ծայրահեղ կուսակցության էլ պատկանեն, թույլ կտան ընդհանրապես շարունակել հախուռն գործելակերպը, և կոտնահարեն Հայոց Ընդհանրական Հայրապետության ու Ս. Էջմիածնի պատմականորեն սրբագործված իրավունքները և գլխավորաբար այս դարավոր հաստատությունների համազգային ու միջազգային հանգամանքն ու բնույթը: Դժվարանում եմ հավատալ ու հիասթափվել և ըստ այնմ վարվել...»[2]:

Հայոց Եկեղեցու, ի մասնավորի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «օրինապահ, կորեկտ և բարյացակամ» վերաբերմունքը Խորհրդային

[1] «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության (1921-1938 թթ.)», կազմեց՝ Սանդրո Բեհբուդյան, Երևան, 1994, էջ 177-178:

[2] Նույնը, էջ 20-21:

«եկեղեցական քաղաքականություն», ձևավորեց մի շարք օղակներ պետական կառավարման և հատուկ ծառայությունների համակարգում ՀԱԵ հետ աշխատանքի համար:

Կոմկուսի հրահանգով ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի առջև կանգնեց դարեր շարունակ հայության հոգևոր, կրթամշակութային և բարոյադաստիարակիչ գործառույթներ իրականացնող հոգևորականությունը՝ որպես հակախորհրդային շահագործող դասակարգ: Արդյունքում, վերացավ ծխական քահանաների ինստիտուտը, և հոգևորականությունը սակավաթիվ պահպանվեց միայն Մայր Աթոռում: Բռնաճնշումների (ձերբակալություն, աքսոր, գնդակահարություն, սպանություն) ենթարկվեցին ծխական քահանայից ընդհուպ Ամենայն Հայոց Կաթողիկոս:

ՀԱԵ զրկվեց տիրապետող, պետական եկեղեցու կարգավիճակից, կրոնական մենաշնորհից, իրավաքաղաքական առումով հավասարեցվեց մյուս դավանանքային հարանվանություններին: Նա արդեն պետք է հաշվի նստեր խղճի ազատության սկզբունքի հետ, որը թեպետ պետությունը հռչակել էր, սակայն չէր իրականացվում: ՀԽՍՀ աթեիստ աշխարհիկ էր, ՀԱԵ այլևս չէր կարող տիրապետող դիրք զբաղեցնել, նրա դավանանքը չէր կարող բոլոր քաղաքացիների համար պարտադիր գաղափարախոսություն դառնալ, այդպիսին էր՝ մարքսիզմ-լենինիզմը:

Գործնականում համոզվելով, որ վերջնական հնարավոր չէ լուծարել ՀԱԵ անգամ բռնաճնշումների և հակաեկեղեցական համատարած քարոզչության օգնությամբ, իշխանությունները որդեգրեցին ՀԱԵ գործունեությունը նվազագույնի հասցնելու քաղաքական ուղեգիծ՝ չգրանցելով ծխական համայնքները, լուծարելով վանքերը, փակելով ուսումնական հաստատությունները: Արդյունքում, հետագա տասնամյակների կոմունիստական քարոզչության և աթեիստական քաղաքականության արդյունքում ոչ միայն պետական կառավարման մարմինները (ինչը հասկանալի էր), այլև բնակչության մեծ մասը ՀԱԵ որևէ նյութական կամ բարոյական աջակցություն չէր ցուցաբերում:

Կոմկուսի հակակրոնական քաղաքականությունը քաղաքացիական պատերազմի, ռազմական կոմունիզմի և ՆԷՊ-ի քաղաքականության բաղկացուցիչներից էր, որը մեղվացվում էր սոսկ ժամանակավոր՝ ներկուսակցական տարաձայնությունների ընթացքում միայն: Հակակրոնական պայքարը կրելով գերազանցապես քաղաքական-գաղափարախոսական բնույթ, մեթոդներում ամենևին չէր սահմանափակում բարոյական հարաբերակցության վարվելակերպի տարրերը: Նրանց առաջնահերթ նպատակն էր ՀԱԵ զրկել քաղաքական,

կազմակերպչական և տնտեսական հենքից:

Կոմկուսի ամբողջատիրական համակարգ հաստատելու ճանապարհին պայքար էր մղվում տիրող մենաշնորհ բոլշևիզմին հակադիր գաղափարախոսությունների դեմ: Կրոնը և եկեղեցին դիտարկվում էին գաղափարախոսության ասպարեզում կոմկուսի մենատիրության հաստատման ճանապարհին հիմնական խոչընդոտներից մեկը՝ դարեր շարունակ հայ ժողովրդի հոգևոր-բարոյական արժեհամակարգի գաղափարական հենք հանդիսացած եկեղեցական գաղափարախոսությունը ենթակա էր ոչնչացման: ՀԱԵ զրկվել էր առնվազն ՀԽՍՀ հայության համախմբելու և առաջնորդելու գործառույթից:

ՀԽՍՀ պաշտոնական գաղափարախոսական, քաղաքական դիրքորոշման հստակ պատկերացման տեսանկյունից ներկայացնենք նրա կուսակցական-պետական ղեկավարների որոշ տեսակետներ: Խորհրդային Հայաստանի, ապա Անդրկովկասի առաջնորդ Ալ. Մյասնիկյանը՝ համեմատած խորհրդահայ այլ ղեկավարների, առավել մեղմ ու կառուցողական դիրքորոշում ուներ ՀԱԵ ու կրոնական հարցերի նկատմամբ: Նա այդ հիմահարցը դիտարկում էր գերազանցապես Հ. Յ. Դ. ու Սփյուռքի հանդեպ խորհրդային քաղաքական վերաբերմունքի համապատկերում: Օրինակ՝ պատասխանելով ՀԽՍՀ-ում կրոնի ու ՀԱԵ դեմ բոլշևիկների հալածանքների մասին մեղադրանքին, նա փորձում էր հիմավորել դրանց քաղաքական սնանկությունը[1]:

Իսկ 1922թ. ՀԽՍՀ խորհուրդների առաջին համագումարում կառավարության հաշվետվության մեջ Ալ. Մյասնիկյանը շեշտում էր. «Մենք այստեղ լուծեցինք նույնիսկ հոգևորականության հարցը, եկեղեցու հարցը: Հոգևորականները երբեք չպիտի ասեն, որ իրենք հալածվում են: Խիղճը և կրոնը այստեղ ազատ է, միայն թե հոգևորականները չպիտի զբաղվեն քաղաքականությամբ: Հոգևորական քաղաքագետներ մեզ պետք չեն»[2]:

Նախկինում Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս, խորհրդայնացումից հետո հակակրոնական պայքարի գաղափարական ղեկավարներից Աշոտ Հովհաննիսյանը պարբերաբար խստագույն քննադատել է ՀԱԵ: Նման ելույթներից անդրադառնանք միայն մեկին:

[1] ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱԼ., Կուսակցություններն գաղութահայության մեջ, Երկեր, հտ. 5, Ե., 2007, էջ 257-259:

[2] Տե՛ս Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների Ա. համագումարի արձանագրություն: Ե., 1922, էջ 16:

Տ. Ասողիկ աբեղա Կարապետյան
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Արխիվի և Թանգարանների տնօրեն

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՆԻՔՆ ՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1920 թվականի մայրամուտին Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ տակավին պարզաբանում և կարգավորում էր իր հարաբերություններն Առաջին Հանրապետության հետ, Խորհրդային Հայաստանում հայտնվում է մի նոր՝ ծայրահեղ իրավիճակում:

Խորհրդայնացման հենց արշալույսին՝ 1920 թ. դեկտեմբերին, կործանարար հարվածներ են հասցվում Հայոց Եկեղեցուն և հանուր հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին. փակվում են եկեղեցիները, կացնահարվում է ծխական կյանքը, բռնագրավվում են եկեղեցական կալվածքները, շինությունները, պատմամշակութային հաստատությունները: Եկեղեցու առջև փակվում են հայ կյանքի բոլոր ասպարեզները, ի գործ է դրվում հայ եկեղեցականին տնտեսապես քայքայման և ֆիզիկապես ոչնչացման պետական ծրագիր:

Եկեղեցին ի գլուխ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և նրա լիազոր ներկայացուցիչներ Սուրբ Էջմիածնի որոշ միաբանների, իրեն բնորոշ հավասարակշռությամբ ու խոհականությամբ, բանակցություններ է սկսում Հայաստանի և Խորհրդային Միության կոմունիստական իշխանությունների հետ:

1920-1930-ական թթ. հազարավոր տողեր են գրվում ու խոսքեր ասվում, որոնք թեև ընդունվում ու լսվում են բոլշևիկ իշխանավորների կողմից, շատ հաճախ նաև՝ սիրալիր կերպով, սակայն իրականության մեջ ոչինչ չի փոխվում... Խորհրդային Հայաստանի պետության մեծ և փոքր պաշտոնյաները մոլեգնաբար պայքարում են Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու դեմ: Մի պայքար, որն ըստ էության չուներ ոչ մի պատճառ, ոչ մի հիմնավորում, քանզի Եկեղեցին և հայ հոգևորականը, հակառակ բռնությունների, կենսական սահմանափակումների ու հալածանքների, հենց սկզբից Խորհրդային Հայաստանին ընդունել է որպես հարազատի, և հանուն Հայրենիքի ու ազգի՝ երբեք չի չարացել ու թշնամաբար չի տրամադրվել աթեիստական գաղափարախոսություն դավանող

Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի հետ համաձայնեցված ծրագրի համապատասխան, մշտական կապի մեջ գտնվելով «ՎՕԿՍ»-ի հետ:

Ընկերության հետագա տարիների աշխատանքները շարունակվեցին հիմնականում վերոգրյալ գործառույթների շրջանակներում և կարողացան որոշակի մերձեցում ապահովել հայրենիքի և սփյուռքի միջև:



Հալեպի Արմենյան երկսեռ վարժարանի գրությունը ՎՕԿՍ-ի լիազոր Մարիա Պետրոսյանին՝
Հալեպում հիմնված «Հայրենաբաղձ հայերու ընդհանուր միութիւն»-ի մասին,
22 հոկտեմբերի, 1944 թ.
ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 1, թ. 4 և շրջ.

Հարցը դիտարկելով զուտ դասակարգային պայքարի դիրքերից և ծայրահեղ քաղաքականացնելով, գաղափարական տեսանկյունից նա մասնավորապես նշում էր. «Ավելորդ է շեշտել, որ մերժում ենք հիմնովին և՛ կրոն, և՛ եկեղեցի»[3]:

ՀԽՍՀ պաշտոնական խոսափողը, որի տեսակետները կուսակցական, պետական և հանրային կառույցները (այդ թվում՝ պետական անվտանգության ու ներքին գործերի) պարտավոր էին տեսաքարոզչական ու գործնական կյանքում ի գործադրություն ընդունել և իրականացնել, իմպերատիվ ոճով միանշանակ հայտարարում էր. «Մեզ մոտ ևս հոգևորականությունը կատարել է բացառապես հակաժողովրդական դեր»[4]:

Հակակրոնական պայքարի տեսաքարոզչական գործառույթների մեջ առաջնահերթ նշանակություն տրվում էր դասագրքերի ու հանրամատչելի գրականության հրատարակությանը՝ հայկական և թարգմանչական: Դրանք գերազանցապես ավելի շատ կրում էին քարոզչական բնույթ, զուրկ գիտականության որևէ նշույլից անգամ, և արդեն 1940-ականներին կորցրել էին պահանջարկը[5]:

Խորհրդային հակակրոնական քաղաքականության գաղափարախոսական հիմնավորման գործընթացին ակտիվ մասնակցեց պաշտոնական պատմագիտությունը: Նման պատմաքաղաքական պայքարի օրինակ նշենք Վ. Պարսամյանի գրքույկները[6]: ՀԱԵ դիտարկելով հակակոմունիստական Հ. Յ. Դ. հետ սերտ կապի ու գործակցության համապատկերում, նոր իշխանություններին որպես թշնամի նույնականացնելով, Վ. Պարսամյանը հետևյալ «մահացու» մեղադրանքներն էր ներկայացնում. «Էջմիածինը ու «ամենայն հայոց»

---

[3] ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա., Էջմիածնի նվիրապետության շուրջը կամ լիբրետո և ռեսերջիմենտո օծման և սրբազան այլ իրերի ու արարողությունների մասին, որ բեմադրվում են քրիստոսէջ մի վայրում, «Խորհրդային Հայաստան», Ե., 1926, սեպտեմբերի 22-23:

[4] Հոգևորականությունը և Խորհրդային Հանրապետությունը, «Խորհրդային Հայաստան», Ե., 1923 օգոստոսի 19:

[5] Մեր նախնական հաշվարկներով, տվյալ թվերին հայերեն Երևանում, Մոսկվայում և ԽՍՀՄ այլ քաղաքներում հրատարակվել են ընդհանուր առմամբ մոտ 100 գիրք-գրքույկ շուրջ 350 հազար տպաքանակով, ինչը հիրավի հսկայական թիվ էր ժամանակի տպագրական սուղ պայմաններում, ինքնին խոսուն փաստ ՀԱԵ ու կրոնի դեմ կոմկուսի պայքարի մարտական տրամադրվածության մասին:

[6] Տե՛ս ՊԱՐՍԱՄՅԱՆ Վ., Էջմիածինն ու Դաշնակցությունը: Ե., 1931: Էջմիածինն անցյալում: Ե., 1931: Այս երկու գրքույկները կարևորվելով քարոզչական ոլորտում՝ վերահրատարակվեցին մեկ գրքով: Տե՛ս Էջմիածինը հակահեղափոխության սպասարկու: Ե., 1932:

կաթողիկոսը Դաշնակցության համար միշտ էլ եղել են այն աֆտորիտետ կազմակերպությունն ու անձը, որոնց օգնությանը ապավինել է նա իր կուսակցական ու պետական ողջ գործունեության ընթացքում: Ավելի ճիշտ, Էջմիածինը հանդիսացել է Դաշնակցություն կուսակցության «հոգևոր թևը»»[1]:

Հակակրոնական պայքարում իշխանություններն առանձնակի տեսաքաղաքական պայքար էին մղում ժողովրդական մտայնությունից կրոնական տոների արմատախիլ անելու ուղղությամբ: Այս հարցը դիտարկվում էր ոչ միայն զուտ տեսական, այլև անգամ գյուղատնտեսական զարգացման տեսանկյունից. դարեր շարունակ կրոնական (քրիստոնեական) տոները հիմնավորապես, թեկուզև ոչ գիտակցված, ժողովրդական ամենալայն զանգվածների շրջանում հանրային ընկալում ունեին: Իշխանությունները լավ հասկանում էին, որ հենց կրոնական տոներն են այն զանգվածային գործիքակազմը, որոնց շնորհիվ բնակչության շրջանում պահպանվում է հավատն առ Աստված[2]: Այդ իսկ պատճառով տասնյակներով ու բազմահազար տպաքանակով հրատարակվեցին գրքույկներ, որոնք թեպետ զուրկ էին ակադեմիական գիտականությունից, սակայն հանրամատչելի, հաճախ նաև պարզունակ, նպատակ ունեին մոռացության տալ ավանդական դարձածը, դրանք արագորեն փոխարինելով նոր հասարակարգի բանվորագյուղացիական ու կոմունիստական «կարմիր» տոներով[3]:

Փաստորեն, իշխանությունները մեղադրելով ՀԱԵ պետությունից եկեղեցու անջատման ակտին դիմադրելու մեջ, իրենք էին մշտապես կոպտորեն ոտնահարում այն և պարբերաբար խառնվում ՀԱԵ ներքին գործերին: ՀԱԵ սադրելով ոչ-օրինական քայլերի, վարկաբեկում և տեղեկատվա-քարոզչական ասպարեզում մենաշնորհ դիրք զբաղեցնելով՝ շեփորահարում էին «եկեղեցական հակահեղափոխության» մասին միֆը: Իրականության մեջ գործնականում ՀԱԵ և իշխանությունների միջև որևէ երկուստեք ընդունելի փոխզիջման անգամ հույս չէր կարող լինել, ինչքան էլ իշխանությունները փորձեին այդպես ներկայացնել. պարզապես նրանց գաղափարախոսությունները միանգամայն հակամարտ և թշնամական

[1] ՊԱՐՍԱՄՅԱՆ Վ., Էջմիածինն ու Դաշնակցությունը, էջ 4:

[2] Մանրամասն տե՛ս ՄԿՐՏՉՅԱՆ Ս., Զատիկ և Համբարձում տոները 1920-1930ական թվերին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, թ. 3, էջ 231-241:

[3] Օրինակ՝ տե՛ս ԾԵՐՈՒՆ ՎԱՆԱԿԱՆ, Մեռոնեփեք: Ե., 1926: ՆԻՄԱՆԴ, Եկեղեցական տոներ: Ե., 1931:

առողջապահության: Այս բաժիններից յուրաքանչյուրը պետք է ղեկավարվեր իր կողմից ընտրված բյուրոյի, նախագահի և փոխնախագահի կողմից[1]:

Այսպիսով, հիմք դրվեց մի կառույցի, որն իր գոյության առաջին իսկ տարվա ընթացքում կարողացավ բավականին աշխուժացնել հայրենիք-սփյուռք հարաբերությունները: Այսպես, ըստ ընկերության 1945 թ. տարեկան գաղտնի հաշվետվության տարվա ընթացքում կարողացել էին մշակութային կապեր հաստատել ԱՄՆ-ի, Ուրուգվայի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Իրանի, Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի, Կիպրոսի հայ ազգային մի շարք կառույցների, ինչպես նաև, «ՎՕԿՍ»-ի լիազորների միջոցով, մի շարք վայրերի հայ համայնքների հետ (Թեհրան, Ղազվին, Եգիպտոս, Հունաստան, Բելգիա, Կալիֆորնիա, Բրազիլիա, Արգենտինա)[2]:

Մշակութային կապեր իրականացվում էին հետևյալ ձևաչափով.

1. Խորհրդային Հայաստանի սոցշինարարության վերաբերյալ հոդվածների և ակնարկների մատուցում.
2. Սփյուռքում գործող հայկական դպրոցների համար դասագրքերի և ուսումնական ծրագրերի ուղարկում.
3. Գիտական և գեղարվեստական գրականության առաքում.
4. 1945 թ. տարեկեսից «Խորհրդային Հայաստան»[3] ամսագրի առաքում.
5. Սփյուռքում խորհրդահայ նկարիչների, թատրոնի, Խորհրդային Հայաստանի ձեռքբերումների վերաբերյալ, լուսանկարների ցուցահանդեսների կազմակերպում[4]:

Ընկերության կողմից քայլեր էին կատարվում սփյուռքահայ երիտասարդներին Հայաստանում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն ստեղծելու, նաև՝ առաջիկայում սպասվող ներգաղթի կազմակերպման ուղղությամբ:

Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունն իր գործունեությունն իրականացնում էր ՀԽՍՀ

[1] ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 37, թ. 5 շրջ.:

[2] ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 35, թթ. 2-3:

[3] Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությանը <<Խորհրդային Հայաստան>> նկարազարդ ամսագրի հրատարակման թույլտվությունը տրվել է ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի կողմից 1945 թ. հունիսի 1-ին (ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 2, թ. 3):

[4] ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 35, թթ. 1-14:

Армянское общество культурных связей с зарубежными странами), հիմնադրվել է 1944 թ. նոյեմբերի 20-ին: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի կողմից ՀԽՍՀ Ժողկոմխորհի ներկայացրած Ընկերության կանոնադրությունը հաստատվել է 1944 թ. նոյեմբերի 1-ին[1]: Ըստ այդմ, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության նպատակն էր.

1. Օտարերկրյա, հատկապես հայկական, առաջադեմ դեմոկրատական շրջանակներին ծանոթացնել տնտեսության, մշակույթի ու գիտության ոլորտներում Խորհրդային Հայաստանի ունեցած ձեռքբերումներին, ինչպես նաև՝ հայ ժողովրդի դարավոր մշակույթի պատմությանը:

2. Հայկական ԽՍՀ-ի մտավորականությանը հաղորդակից դարձնել արտասահմանցի, հատկապես, հայազգի մտավորականների գիտական, գրական-գեղարվեստական և արվեստի այլ ոլորտների լավագույն գործերին[2]:

Վերոգրյալ նպատակներն իրականացնելու համար Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունը պետք է կապեր հաստատեր օտարերերկրյա, հատկապես՝ հայկական առաջադեմ կազմակերպությունների ու գործիչների հետ և ՎՕԿՍ-ի միջոցով ու նրա լիազորությամբ իրականացնել հետևյալ գործողությունները.

1. Ուղարկել նրանց զեկույցներ, հոդվածներ և այլ նյութեր Հայկական ԽՍՀ-ի գիտության, մշակույթի ու արվեստի վերաբերյալ:

2. Արտասահմանում գործող առաջադեմ ուժերի և «ՎՕԿՍԻ» լիազորների միջոցով կազմակերպել շարժական ցուցահանդեսներ, հրապարակված աշխատությունների փոխանակումներ, Հայկական ԽՍՀ գիտության, մշակույթի ու արվեստի ականավոր ներկայացուցիչների ելույթներ:

3. Հայաստանում կազմակերպել երեկույթներ և զեկուցումներ արտասահմանյան գիտության ու մշակույթի, սփյուռքահայության հետ կապերին առնչվող հարցերի վերաբերյալ:

4. Հրատարակել բրոշյուրներ և տեղեկագրեր:

Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունն ուներ հետևյալ բաժինները. ա) գիտության, բ) գրականության, գ) արվեստի (թատրոն, երաժշտություն, կինո, ճարտարապետություն), դ) ժողովրդական կրթության և ե)

[1] Նույն տեղում, թ. 2:

[2] ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 37, թ. 1:

քաղաքական հարթությունում էին միմյանց նկատմամբ՝ բուն իշխանությունների անզիջում դիրքորոշման պատճառով:

Իրավական տեսանկյունից իշխանությունն ամրապնդում էր այն քաղաքական կամայականությունը, որ իրականացվում էր ՀԱԵ նկատմամբ. պետությունից եկեղեցու անջատումից մինչև այլ կազմակերպությունների համեմատ խտրական դրության մեջ դնելով, զրկելով՝ այդ թվում նաև սոցիալ-տնտեսական կյանքում, ցանկացած իրավական գործունեություն ծավալելու տարրական հնարավորությունից[1]:

Դարեր շարունակ գործած եկեղեցական կանոնական իրավական նորմերը վերջնականապես կոմունիստական վարչակարգի կողմից վերացվեցին: Եկեղեցական իրավունք՝ թե դարավոր կանոնական, թե «Պոլոժենիե»-ի վրա հիմված, ի չիք համարելով՝ իշխանությունները ոտնահարելով այդ ամենը պարտադրեցին ՀԱԵ ընդունել և գործել միայն աթեիստական օրենսդրության պայմաններում: Խորհրդային օրենսդիր և նորմատիվ ակտերը կարգավորում էին ոչ միայն պետություն-եկեղեցի հարաբերակցության ընդհանուր հարցերը, այլև պարտադիր կարգով «ներխուժում» էին ներեկեղեցական-ծիսական և կենցաղային ոլորտ, փորձում արմատապես խարխլել դարերով կայացած իրավանորմատիվ հարաբերությունները, աստիճանակարգը: Գրեթե բոլոր հարցերում իրավական տեսանկյունից պետությունն էր ձգտում հանդես գալ որպես մենաշնորհային իրավատեր ու սուբյեկտ, հասարակական և միջանձնյա հարաբերություններում լինելով միակ իրավավճռորոշ դատական միավորը: Հոգևորականները դիտարկվելով որպես հակահեղափոխական տարրեր՝ ենթակա էին բոլոր խիստ պատիժներին՝ գույքի զրկումից ընդհուպ աքսոր և մահապատիժ:

ՀԱԵ զրկելով գույքային-հողային սեփականությունից որպես մասնավոր սեփականատիրոջ, անգամ՝ բարեգործություն կատարելու հնարավորությունից, պետությունն իրավական գործիքակազմով նախատեսում էր ՀԱԵ սահմանադրական, քաղաքացիական, քրեական և հարկային իրավական կարգավիճակը:

Հակակրոնական քաղաքականությունն ամրագրվեց սահմանադրորեն: Խորհրդային Հայաստանի առաջին սահմանադրության մեջ մի շարք հոդվածներում այդ ամենը հստակ ամրագրված էր: Կարևորելով իրավականից զատ դրանց քաղաքական դերակատարությունը, մեջբերումներ կատարենք. «Հոդված 6/ա. Եկեղեցին անջատվում է

[1] Տե՛ս ОГАНЕСЯН К. Свобода совести и религии в Советской Армении, «Արդարադատություն», 2018, N. 2, cc. 74-80.

պետությունից, վերածվելով հավատացյալների մասնավոր համայնքի, և դպրոցը՝ եկեղեցուց: Բոլոր քաղաքացիներին իրավունք է տրվում ազատորեն վարել կրոնական և հակակրոնական պրոպագանդ»: «Հ. 7Բ. Քաղաքական ու կրոնական հալածանքի ենթակա բոլոր օտարերկրացիներին տրվում է ապահովություն և պաշտպանություն»: «Հ. 71/Դ. Ընտրելու և ընտրվելու իրավունքից զուրկ են – կրոնավորներ և կրոնական պաշտամունքի հոգևոր սպասավորները. ա. Վարձու աշխատանք շահագործողները»[1]:

Փաստորեն, ՀԱԵ զրկվում էր կարևորագույն ու առաջնահերթ քաղաքացիական իրավունքներից՝ ընտրական ու սեփականության, դադարում իրավաբանական անձ լինելուց, իրավական առումով նույնականացվում հակահեղափոխական տարրերին:

1926թ. փոփոխություններով ՀՍԽՀ սահմանադրությամբ պահպանվեցին նշյալ հոդվածները, սակայն կատարվեց նոր հավելում. «Հոդ. 86/գ. Չեն ընտրում և չեն կարող ընտրվել – բոլոր դավանությունների և աղանդների կուսակրոններն ու կրոնական պաշտամունքների հոգևոր սպասավորները, որոնց համար այդ զբաղմունքն արհեստ է»[2]: 1935թ. նոր սահմանադրության մեջ հիմնականում պահպանվեցին նախկինում կրոնի հանդեպ քաղաքական դիրքորոշումները[3]:

ՀԽՍՀ վերջին սահմանադրությամբ այլ իրավական կեցվածք էր դրսևորվում. «Հոդ. 50. ՀՍՍՀ քաղաքացիների համար երաշխավորվում է խղճի ազատություն, այսինքն՝ ցանկացած կրոնը դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու, կրոնական պաշտամունքներ կատարելու կամ աթեիստական պրոպագանդա անելու իրավունք: Թշնամանքի և ատելության հրահրումը կրոնական հավատալիքների առնչությամբ՝ արգելվում է: ՀՍՍՀ-ում եկեղեցին անջատված է պետությունից և դպրոցը՝ եկեղեցուց»[4]:

Փաստորեն, խորհրդայնացումից հետո՝ ՀԱԵ դարեր անց, զրկվեց իրավական առումով հանրային կյանքում նախկինում միակ և տիրապետող հոգևոր-կրոնական կառույցի մենաշնորհից, բոլոր իրավունքներից ու արտոնություններից: Սակայն, դառնալով հետապնդվող ու բազմակողմանի բռնաճնշվող կառույց, զուրկ գույքից, վանական

[1] Տե՛ս ՀՍԽՀ սահմանադրություն (Հիմնական օրենք): Ե., 1922, էջեր 1-3, 14:

[2] Տե՛ս ՀՍԽՀ սահմանադրություն (Հիմնական օրենք): Ե., 1926, էջ 44:

[3] Տե՛ս Սահմանադրություն ՀՍԽՀ: Ե., 1935, էջեր 3, 6, 7, 45:

[4] Տե՛ս ՀՍՍՀ սահմանադրություն: Ե., 1978, էջեր 16, 24, 35:

գործողությունների ճանապարհային քարտեզ, որում որոշակի դեր էր հատկացված նաև հայկական սփյուռքին: Մասնավորապես՝ պետք է կազմակերպվեր հայերի զանգվածային ներգաղթ և Հայաստան ներգաղթել ցանկացող մեր ազգայինների հազարավոր դիմումները պետք է օգտագործվեին իբրև Թուրքիային ներկայացվող տարածքային պահանջները հիմնավորող փաստարկներից մեկը:

Վերոգրյալներից ելնելով՝ ԽՍՀՄ իշխանությունները խմբագրեցին հայկական սփյուռքի հանդեպ վերաբերմունքը և մշակվեց հայ սփյուռքի հետ նոր քաղաքականություն վարելու ծրագիր: Առաջին հերթին ՌԱ և ՍԴՀ կուսակցություններն իրենց կառույցներով սկսեցին դիտարկվել իբրև առաջադիմական ուժեր, և միայն ՀՅԴ-ն իր կառույցներով շարունակվեց համարվել թշնամական ուժ:

Այս ամենի ենթատեքստում Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի համամիութենական ընկերության (Всесоюзное общество культурной связи с заграницей (ВОКС))[1] կողմից Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության կենտրոնական կոմիտեն (ՀԿ(բ)Կ ԿԿ) առաջարկ ստացավ Հայաստանում հիմնել Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերություն: Ստացված առաջարկի մասին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1944 թ. սեպտեմբերի 12-ի գաղտնի նիստում զեկուցեց ԿԿ-ի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը և ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ արտասահմանում գործող առաջադեմ հայկական կազմակերպությունների հետ կապերն ընդլայնվում են, նաև այն, որ վերջիններն ավելի բարեկամական են տրամադրվում Խորհրդային Միության նկատմամբ, խնդրեց ՀԿ(բ)Կ ԿԿ-ին թույլատրել կոմիտեի ստեղծումը[2]: Իբրև կոմիտեի առաջին նախագահ առաջադրվեց Մ. Պետրոսյանը:

Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունը, որը հայտնի է «ԱՕԿՍ» անվամբ (հապ. ԱՕԿՍ, ռուս.

[1] Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի համամիութենական ընկերություն (Всесоюзное общество культурной связи с заграницей (ВОКС)) – խորհրդային հասարակական կազմակերպություն, հիմնվել է 1925 թվականին: 1958-ին վերակազմակերպվել է և կոչվել Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի խորհրդային կազմակերպությունների միություն (Союз советских обществ дружбы и культурных связей с зарубежными странами (ССОД)): Պաշտոնապես ընկերության խնդիրներն էին. ԽՍՀՄ հասարակությանը ծանոթացնել օտար երկրների մշակութային նվաճումներին և արտասահմանում Խորհրդային Միության ժողովուրդների մշակույթի մասսայականացումը, նպաստել ԽՍՀՄ և այլ երկրների ժողովուրդների միջև բարեկամության և փոխըմբռնման զարգացմանն ու ամրապնդմանը:

[2] ՀԱԱ, ֆ. 709, ց. 1, գ. 2, թ. 1-2:

խորհրդային իշխանության և Հայաստանի աշխատավորության նկատմամբ» և որոշում կայացրեց առաջարկել ՀԽՍՀ ժողկոմխորհին լուծարել այն[1]: Նույն թվականի դեկտեմբերի 3-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհը որոշում կայացրեց ՀՕԿ-ը լուծարելու մասին[2]:

Իր գոյության ընթացքում՝ 1921-1937 թթ. ՀՕԿ-ը, որն ուներ շուրջ 200 մասնաճյուղեր աշխարհի տարբեր քաղաքներում, շոշափելի ներդրում ունեցավ Հայաստանի վերաշինության, ազգաբնակչությանն օժանդակելու և հայրենիք-սփյուռք հարաբերությունների ձևավորման գործում:

Սփյուռքահայության հետ խզված հարաբերություններն աստիճանաբար սկսեցին վերականգնվել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այսպես, 1943 թ. փետրվարի 2-ին Ամենայն Հայոց ազգընտիր տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը կոչով դիմեց հայ հավատացյալ ժողովրդին՝ հորդորելով Հայրենական պատերազմի հաղթական ավարտն ապահովելու համար «ամեն միջոցներով օգնել Կարմիր բանակին», որով էլ հիմք դրվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար միջոցների հանգանակմանը: Կոչը մեծ արձագանք գտավ սփյուռքահայության շրջանում. ԱՄՆ-ում, Հարավային Ամերիկայի երկրներում, Իրանում, Կիպրոսում, Հորդանանում, Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Եթովպիայում, Եգիպտոսում ու այլ երկրներում ստեղծվեցին հանգանակող կոմիտեներ և սկսվեց նվիրահավաքի գործընթացը: Հավաքված միջոցներով ձեռք բերվեց 21 տանկ, ապա 1944 թ. մայիսին ռազմական գործողություններին մասնակցող «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը համալրվեց ևս 22 տանկով[3]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ստեղծվող աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում ԽՍՀՄ իշխանությունը ձեռնարկել էր ետ վերադարձնել 1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիային զիջված տարածքները (Կարսի մարզ և Սուրմալուի գավառ): Կանխատեսելով, որ Արևելյան Եվրոպայում ու Բալկաններում ԽՍՀՄ-ի ազդեցության մեծացմամբ մտահոգված ԱՄՆ-ն և Անգլիան կփորձեն հակազդել այդ նպատակներին՝ Ի. Ստալինը մշակեց

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 53, թթ. 89-90:

[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 4, գ. 10902, թ. 4:

[3] 1944 թ. հուլիսի 23-ին շարասյունը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: 1945 թվականին գունդը, որի կազմում էր «Սասունցի Դավիթ» շարասյունը, արժանացավ գվարդիականի կոչման և ստացավ 135-րդ կարմրադրոշ առանձին տանկային գունդ անվանումը:

կառույցներից, իրավաբանական կարգավիճակից, ՀԱԵ կարողացավ շարունակել գործել ձևավորված աթեիստական պայմաններում:

1920-1930-ական թվականներին կոմկուսի կրոնական քաղաքականության պատմությունն ապացուցեց ՀԱԵ դեմ կիրառված բռնի միջոցառումների սնանկությունը. ՀԱԵ չվերացավ: Ավելին, անգամ ԽՍՀՄ խիստ միակարծության պայմաններում, ՀԱԵ շարունակեց մնալ այն միակ լեգալ գործող կառույցը, ում գաղափարախոսությունը լրիվ տարբերվում էր իշխող կոմկուսի պաշտոնական գաղափարախոսությունից: Արդեն այս հանգամանքն ինքնին խոսուն է և հետագա բոլոր տեսակի իշխանություններին լուրջ մտածելու և իրապաշտորեն գործելու պատգամ է հաղորդում:

Չնայած աթեիստական քարոզչությանը, այնուամենայնիվ, 1937թ. մարդահամարը միանգամայն այլ պատկեր ներկայացրեց[1]: Մարդահամարի համաձայն՝ ԽՍՀՄ-ում 16 և բարձր տարիքի բնակիչների շրջանում հավատացյալներն ավելի շատ էին, քան անհավատները. ՀՍԽՀ-ում հավատացյալների ցուցանիշն ավելի բարձր էր:

Եվ միայն Հայրենական մեծ պատերազմից հետո խորհրդային իշխանությունը և կոմկուսն էապես փոխեցին եկեղեցու և կրոնի նկատմամբ իրենց քաղաքական ուղեգիծը, անգամ՝ լուծարվեց պետության անսահմանափակ աջակցությունը վայելած Մարտնչող անաստվածների միությունը:

Պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների քաղաքագիտական վերլուծության արդիականությունը պայմանավորված է հետևյալ բաղկացուցիչներով:

Առաջին, մոտավոր անցյալի հետազոտության հանրային պահանջարկով. ՀԱԵ իր կազմակերպչական կառույցով ու գաղափարախոսությամբ անգամ խորհրդային բռնաճնշումներից և ներկայումս տարատեսակ աղանդավորական ու այլ կրոնական-հարանվանական միավորների ի հայտ գալուց՝ շարունակում է մնալ հայության և ՀՀ հիմնական, գլխավոր եկեղեցական-կրոնական կառույցը, հասարակության բոլոր խավերի վրա ունեցած հոգևոր-գաղափարական ու քաղաքական ազդեցությամբ, որից շատ դեպքերում կախված է պետական իշխանության կրոնական քաղաքականությունը:

Երկրորդ, թեմայի իմացությունը հնարավորություն կտա այժմ հնարավորինս անաչառ և իրատեսորեն կառուցել պետություն-եկեղեցի

[1] Մանրամասն տե՛ս ЖИРОМСКАЯ В. Б., КИСЕЛЕВ И. Н., ПОЛЯКОВ Ю. А. Полвека под грифом «секретно»: Всесоюзная перепись населения 1937 года. М., 1996.

փոխհարաբերակցությունը:

Երրորդ, նորանկախ պետականության պայմաններում, մանավանդ անցումային-կայացման փուլում, ՀԱԵ աշխարհասփյուռ կառույցների հսկայական ներուժի օգտագործման անհրաժեշտությամբ, հանրային հոգևոր ներդաշնակության, հասարակական կոնֆլիկտների կարգավորման դերակատարմամբ, պետականության ամրապնդմանն իրական և համակողմանի նպաստման հնարավորություններով:

Չորրորդ, գլոբալիզացիայի համընդհանրացնող լիբերալիզմի պայմաններում ՀԱԵ ունեցած տեղի, դերի ու նշանակության նորովի պատկերացումը, առկա հանրային-կրոնական մարտահրավերներին դիմակայելու կամ հարմարվելու կարողությունը, դարերից եկող կառույցները և դավանանքային գաղափարախոսությունը պահպանելուն միտված վտանգներից խուսանավումը:

Այսպիսով, 1920-1930-ական թվականներին կոմկուսի և խորհրդային իշխանության հակակրոնական քաղաքականությունը միանշանակ նպատակաուղղված էր որպես հանրային-հոգևոր ինստիտուտ ՀԱԵ քայքայմանը-ոչնչացմանը՝ հոգևորականների քրեական հետապնդմամբ, քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից (օրինակ՝ ընտրական) զրկմամբ, գույքի բռնագրավումով ու պետականացմամբ, ներեկեղեցական պառակտմամբ, եկեղեցիների և վանքերի ավերմամբ ու փակմամբ, դավանանքային ծիսակատարությունների կատարման համատարած արգելքներով:

Այժմ, նորանկախ հանրապետության պայմաններում, պետություն-եկեղեցի փոխհարաբերակցության հիմախնդիրն արդիական է, բավականին կենսական և ինչ-որ առումներով վտանգահարույց: Այդ իսկ պատճառով 1920-1930-ական թվականներին ՀԱԵ նկատմամբ խորհրդային պետության, կոմկուսի, իշխանական տարբեր կառույցների վերաբերմունքի քաղաքագիտական վերլուծությունն ու վերհանումն արդիական ու գործնական նշանակություն ունի: Խորհրդային անցյալի դասերի ընկալումը, սերտումը ու անհրաժեշտ հետևությունների կատարումը խիստ հրատապ է և ուսուցողական, հետագա կորստաբեր սխալներից խուսափելու և զերծ մնալու նպատակով:

շինարարության, է) Աշխատում է Եվրոպայում և Ամերիկայում հայտնաբերված քիմիական, տեխնիկական և ինդուստրիական նորություններ մուծել Հայաստան»[1]: Զեկուցագրից հստակ երևում է, որ ՀՕԿ-ի գործունեության մեջ առաջնային դերը վերապահված էր նրա քաղաքական նպատակներին: Ի վերջո սա հանգեցրեց նրան, որ ՌԱ կուսակցությունը ևս որոշում կայացրեց իր անդամներին հեռացնել ՀՕԿ-ի մասնաճյուղերին անդամակցելուց: Կուսակցության 1928 թ. հունիսի 16-ին հրապարակած շրջաբերականում, անդրադառնալով ՀՕԿ-ին, հայտարարվում էր. «Արտասահմանեան ՀՕԿ-երու մասնաճիւղերու մէջ գտնուող համայնավար անդամները վերջին երկու տարուան ընթացքին երևան հանեցին ՀՕԿ-ի բուն նպատակին և գաղութահայութեան ճնաասող կուսակցական նկատումներ: Այդ իրողութեան հանդէպ մեր ՀՕԿ-ի անդամ-ընկերները, ուր որ կարելի է, պէտք է դիմադրեն կուսակցական այդ հակումին, քանի որ այս կազմակերպութիւնը ըստ իր կանոնագրի քաղաքականութեամբ պիտի չզբաղուի, հակառակ պարագային մեր ընկերները պէտք է հեռանան ՀՕԿ-երէն, առանց վէճի և առանց հրապարակային արտահայտութեանց»[2]:

Խորհրդային Միությունում 1930-ականների երկրորդ կեսից սաստկացող բռնաճնշումներին զուգընթաց տարվում էր արտասահմանի հետ հասարակական կառույցների միջոցով հարաբերությունները դադարեցնելու քաղաքականությունը, ինչն ուղիղ հարվածի տակ էր դնում ՀՕԿ-ի հետագա գոյության հարցը:

1936 թ. ապրիլի 26-ին Անդրկովկասի երկրա(մասա)ային կոմիտեի բյուրոյի նիստի որոշմամբ ստեղծվեց հանձնաժողով, որը պետք է կազմեր և ՀԿ(բ)Կ ԿԿ ներկայացներ ՀՕԿ-ի գործունեությանը վերաբերող հաշվետվություն[3]: Մյուս կողմից՝ հակախորհրդային, տրոցկիստական, հակահեղափոխական և ազգայնական գործունեություն ծավալելու մեղադրանքով ձերբակալվեցին ՀՕԿ-ի գլխավոր վարչության նախագահ Ա. Եսայանն ու անդամների մի մասը (Վ. Ալազան, Դր. Սիմոնյան, Ա. Երզնկյան): Օղակը սեղմվում էր: ՀԿ(բ)Կ ԿԿ բյուրոյի 1937 թ. նոյեմբերի 13-ի նիստը լսելով ՀՕԿ-ի գործերով զբաղվող հանձնաժողովի զեկույցը՝ հանգեց այն եզրակացության, որ Հայաստանի օգնության կոմիտեն, ըստ էության, հանդիսանում է «հակահեղափոխական դաշնակցական պրովակացիա

[1] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 135, թ. 37:

[2] ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 7, թ. 39:

[3] 178, ց. 1, գ. 254, թ. 31:

մասնաճյուղերի գործունեությանը՝ հայ ազգի գոյատևման միակ պայմանը տեսնելով Խորհրդային Հայաստանի կայացման ու բարգավաճման մեջ:

Հետագայում ևս բոլոր գաղթավայրերում շարունակվեց ՀՕԿ-ի նկատմամբ անվստահության ու թշնամանքի տրամադրությունները: Չնայած Երևանից պարբերաբար հնչող հավաստիացումներին, թե ՀՕԿ-ը բացառապես վերաշինական կազմակերպություն է և քաղաքական որևէ նպատակ չի հետապնդում, այնուամենայնիվ գնալով ավելի էին սրվում հարաբերությունները հայ քաղաքական կուսակցությունների և ՀՕԿ-ի միջև: Անգամ Ռամկավար ազատական կուսակցությունը, որ սկզբնական շրջանում եռանդով ու խանդավառությամբ որոշեց սատարել և մասնակցել ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի ձևավորմանն ու աշխատանքներին, քանի որ կուսակցությունը որդեգրել էր Խորհրդային Հայաստանի վերաշինությանն ու ներգաղթին օժանդակելու քաղաքականություն, աստիճանաբար սկսեց ավելի կասկածանքով ու զգուշավորությամբ վերաբերվել նշված գործընթացին: Կուսակցությունների ոչ բարեկամական տրամադրվածությունը ՀՕԿ-ի նկատմամբ զուրկ չէր իրական պատճառներից: Երևանի ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանն ուղղված մի զեկուցագրում[2] կարդում ենք. «Ռամկավար շարքայիններին ՀՕԿ-երի մեջ առնելը խրախուսվում է արտասահմանյան մեր ճյուղերի կողմից, որովհետև Ամերիկայի օրինակը ցույց է տալիս, որ այդպիսով մեծապես թուլանում է ազգայնական այդ կազմակերպությունը: ՀՕԿ-ը արտասահմանում ներկայումս հանդիսանում է այն միակ, բավականաչափ ուժեղ կազմակերպությունը, որ ա) Սիստեմատիկ պրոպագանդ է մղում աշխատավորական զանգվածների մեջ և ինտիլիգենցիայի մի որոշ խավում՝ Խորհրդային Հայաստանի և առհասարակ խորհրդային կարգերի համար. բ) Պայքարում է դաշնակցության դեմ. գ) Հանդիսանում է որպես մի պլատֆորմ, ուր կոմունիստ ընկերները մոտիկ շփման մեջ են մտնում բանվորական և մանրարհեստավորական տարրերի հետ և անում որոշ պրոպագանդ նրանց շրջանում. դ) Պատճառ է լինում, որ ռամկավարներից և հնչակյաններից բանվորական-աշխատավորական տարրերը հետզհետե պոկվեն, ազատագրվեն ազգայնական իդեոլոգիայից և մոտենան բանվորականին. ե) Տարածում է խորհրդային գրականությունը գաղութներում. զ) Տալիս է նյութական օժանդակություն Խ. Հայաստանի

[1] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 135, թ. 37:

[2] Զեկուցագիրը պատճեն է, ամսաթիվ ու ստորագրություն չկա, բայց բովանդակությունից ենթադրվում է, որ պետք է գրված լինի 1927 թ. կեսերին (ՀԱԱ, ֆ.178, ց.1, .135, թթ.35-41):

Ամատունի Վիրաբյան
պատմական գիտությունների դոկտոր

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ (1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.)

1920-1930-ական թվականներն առանձնահատուկ են նրանով, որ Խորհրդային Հայաստանը, համարվելով միութենական հանրապետություն, իրականում հանդիսանում էր Անդրկովկասի Դաշնության երեք հանրապետություններից մեկը և չուներ անմիջական հարաբերություն ԽՍՀՄ իշխանության բարձրագույն մարմինների հետ: Հայաստանին վերաբերվող բոլոր հարցերը լուծվում էին Թիֆլիսում՝ Անդրկովկասի ղեկավարության կողմից: Խորհրդային մարմիններում ձևականորեն պահպանելով կուսակցական ղեկավարման գծով սահմանադրությամբ հանրապետություններին տրված իրավասությունները՝ ամեն ինչ, սակայն, կենտրոնացված էր Կոմունիստական կուսակցության Անդրկովկասի երկրային կոմիտեի՝ Անդրերկրկոմի ձեռքում: Կուսակցական մենիշխանության ուժեղացման պայմաններում փոքր շեղում «գլխավոր» (հետագայում «լենինյան» անվանված) գծից, սեփական կարծիքի թեկուզ վարանոտ մի դրսևորում, և հանրապետության ղեկավար աշխատողը տեղափոխվում էր Անդրերկրկոմ կամ ուղարկվում ՌԿ(բ)Կ Կենտկոմի «տրամադրության տակ», որ է՝ երկրի հեռավոր շրջաններում ղեկավար աշխատանքի՝ պատվավոր աքսորի: Անդրկովկասում առաջինն այդ «պատվին» արժանացան Վրաստանի կուսակցական ղեկավարները, ովքեր պիտակավորվել էին «նացիոնալ-ուկլոնիստներ» անվամբ: ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն 1922 թ. դեկտեմբերի 21-ին, լսելով Ձերժինսկու հանձնաժողովի եզրակացությունները, որոշեց Մդիվանուն, Ցինցաձեին, Քավթառաձեին և Մախարաձեին տեղափոխել այլ աշխատանքի՝ Վրաստանից դուրս[1]:

1922 թ. մարտին՝ Ալեքսանդր Մյասնիկյանի՝ Անդրդաշնության միութենական խորհրդի նախագահ հաստատվելու և Թիֆլիս տեղափոխվելու, Ս. Լուկաշինի՝ ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ նշանակվելուց հետո, ՀԿ(բ)Կ Կենտկոմում ներկուսակցական պայքար ծավալվեց կենտկոմի քարտուղարի հավանական թեկնածուի շուրջ: Սակայն դա առիթ էր. իրականում շարունակվում էր Հայաստանի նախկին հեղկոմի «ձախ» թևի ներկայացուցիչների (Ավիս Նուրիջանյան, Հայկազ Կոստանյան) և նոր իշխանության ներ-

[1] Хармандарян С. Ленин и становление Закавказской Федерации. 1921-1923, Ереван, 1969, с.395.

կայացուցիչների (Սարգիս Լուկաշին և կողմնակիցներ) պայքարն իշխանության համար: Ավիս-Կոստանյան խումբը ցանկանում էր Հայաստան աշխատանքի հրավիրել Անաստաս Միկոյանին և այդ նպատակով դիմել էր ռրոշակի քայլերի, մինչդեռ Լուկաշինը կտրականապես դեմ էր: Միկոյանի հրավիրմանը դեմ էր նաև Անդրերկրկոմի ղեկավարությունը (Ա. Մյասնիկյան, Գրիգորի Օրջոնիկիձե):

Անդրերկրկոմի նախագահությունը 1922 թ. հունիսի 24-ին քննարկեց ՀԿ(բ)Կ Կենտկոմում ստեղծված իրավիճակը և ընդունեց համապատասխան որոշում[1]: Հաստատվեց կենտկոմի նոր կազմ: Անդրերկրկոմի տրամադրության տակ կանչվեցին Հայկազ Կոստանյանը և կենտկոմի կազմակերպական բաժնի վարիչ Աշոտ Տեր-Սահակյանը (նա Միկոյանին հրավիրելու համար նամակով դիմել էր Ստալինին): Ավիսին ոչինչ չէր մնում անելու, քան դիմել Անդրերկրկոմ՝ իրեն ՌԿ(բ)Կ Կենտկոմի տրամադրության տակ ուղարկելու խնդրանքով, որը և Անդրերկրկոմը բավարարեց 1923 թ. հունվարի 20-ին[2]:

Ոչ տնական դադարից հետո ՀԿ(բ)Կ ղեկավարության մեջ ներկուսակցական պայքարը ծավալվեց 1927 թ. սկզբներին: Մի կողմում ՀԿ(բ)Կ Կենտկոմի երիտասարդ անդամներն էին՝ «մաքուր» կենսագրությամբ (Արսեն Եսայան, Հովհաննես Բանահյան), մյուս կողմում՝ վերջիններիս գնահատմամբ՝ «հեղափոխական անցյալ» չունեցողները (Աշոտ Հովհաննիսյան, Սարգիս Համբարձումյան, Սարգիս Լուկաշին (վերջինս աշխատում էր Թիֆլիսում):

ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Հովհաննիսյանը մեղադրվում էր «ազգայնականության և տրոցկիզմի դեմ պայքարում կուսակցության գծի խեղաթյուրման, սխալների, դաշնակների և այլ հակահեղափոխական կուսակցությունների դեմ ճիշտ և հետևողական պայքարի բացակայության» մեջ[3]: Եթե սրան էլ ավելացնենք նրա «սպեցեֆիկ» անցյալը և այն, որ երիտասարդներին էր միացել նաև կենտկոմի քարտուղար, «մաքուր» անցյալով Ալեքսանդր Շահուվարյանը, ապա Ա. Հովհաննիսյանին այլ ելք չէր մնում, քան դիմելու ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությանը՝ իրեն առաջին քարտուղարի պարտականություններից ազատելու համար[4]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության նիստը, որը կայացավ 1927 թ. հու-

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև ՀԱԱ), ֆ.1, ց.2, գ.49, թ.83:

[2] ՀԱԱ, ֆ.1, ց.3, գ.7, թ.3շրջ.:

[3] ՀԱԱ, ֆ.1, ց.7, գ.77, թ.38-41:

[4] ՀԱԱ, ֆ.1, ց.7, գ.30, թ.69-70:

ուժերին Հայաստանի օգնության գաղափարի շուրջ և կապել նրանց Խորհրդային Հայաստանի հետ: Իր նպատակների իրականացման համար ՀՕԿ-ի Երևանի կենտրոնական վարչությունը կարճ ժամանակամիջոցում մասնաճյուղեր հիմնեց խորհրդային երկրի ու արտասահմանի բազմաթիվ հայաշատ քաղաքներում: Առաջին երեք տարվա ընթացքում ՀՕԿ-ի մասնաճյուղերի միջոցով արտասահմանից Հայաստան է ներմուծվել գլխավորապես ալյուր, սերմացու, ցորեն, հագուստեղեն, դեղորայք, մանր գործիքներ, գրենական պիտույքներ՝ մոտ կես միլիոն ռուբլու արժողությամբ: Այդ շրջանում հիմնվել են նաև երկու բուժկայաններ՝ մալարիայի դեմ պայքարելու համար[1]:

Կոմիտեն պետք է միավորեր համայն հայության մտավոր ու նյութական կարողությունները: ՀՕԿ-ի հիմնադիր ստատուտի առաջին կետը հետևյալն էր. «Հ.Օ.Կ.-ի անմիջական նպատակն է օգնութեան հասնել Հայաստանի սովեալ ազգաբնակութեան և իր այդ գործունէութեան ընթացքում նաև օժանդակել երկրի շինարարութեան գործին»: Առաջադրված նպատակի իրագործման համար անհրաժեշտ էր Հայաստանում և, հատկապես, արտասահմանյան հայ գաղթօջախներում կատարել նվիրահավաքներ (դրամ, իրեր, մթերք) և այն բաշխել կարիքավորներին կամ գործածել երկրի առջև ծառացած այլ կարևոր խնդիրների լուծման համար: Նախատեսվում էր գրավոր ու բանավոր պրոպագանդա մղելով, հատուկ նվիրակներ ու պատգամավորներ գործուղելու միջոցով հարաբերություններ հաստատել «արտասահմանի հասարակական այն օրգանների հետ, որոնք կարող են այդ նպատակի համար օգտակար լինել»:

ՀՕԿ-ի առաքելության խնդրում հայկական գաղթավայրերում տարբեր քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների ու խավերի դիրքորոշումը տարբեր էր: Դրանցից խոշորագույնը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, սկզբից ևեթ թշնամական դիրքորոշում ուներ ՀՕԿ-ի նկատմամբ՝ հայկական գաղթավայրերում նրանց գործողություններն ընդունելով իբրև համայնավարական գաղափարախոսության տարածող ու ազգային միասնությանը վնասող երևույթ: Հնչակյան կուսակցությունն սկզբնական շրջանում որոշ մասնակցություն ունեցավ՝ մասնաճյուղերում իր ներկայացուցիչները նշանակելով, սակայն արդեն 1926 թվականի վերջերին նրանք ևս դադարեցրին իրենց օժանդակությունը՝ հրապարակային հայտարարություններով արգելելով իրենց համակիրներին մասնակցելու ՀՕԿ-ի մասնաճյուղերի աշխատանքներին[1]: Ռամկավար ազատականները դեռևս շարունակում էին լայնորեն սատարել

[1] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 135, թ. 35:

Գոհար Ավագյան
պատմական գիտությունների թեկնածու

ՀԽՍՀ-ՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ (1921-1945)

Տնտեսական, կրոնական և քաղաքական անբարենպաստ գործոններով պայմանավորված՝ դարերի ընթացքում տեղի է ունեցել հայերի արտագաղթ իրենց բնօրրաններից, ինչն էլ հանգեցրել է աշխարհի տարբեր մայրցամաքներում հայկական մեծ ու փոքր համայնքների ձևավորմանը: Այս երևույթը հատկապես աղետալի չափերի հասավ Հայոց Ցեղասպանության տարիներին, երբ թուրքական կոտորածներից ու տեղահանություններից մազապուրծ եղած հայերը սփռվեցին աշխարհով մեկ:

Հայաստանում խորհրդային կարգերի օրոք սփյուռքահայության հետ հարաբերություններն իրականացվել են մի շարք պետական-կառավարական, եկեղեցական ու հասարակական կառույցների միջոցով: Անկախ իրենց բնույթից սփյուռքահայության հետ հարաբերությունների գործընթացը մշտապես եղել է ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների խոշորացույցի տակ և վերահսկվել ու ուղղորդվել է նրա կողմից՝ ծառայեցվելով երկրի պետական ու քաղաքական շահերին:

Հայաստանի խորհրդայնացումից հետո քայքայված տնտեսության, սովի, համաճարակի, տասնյակ հազարավոր անօթևան գաղթականների տեղավորման ու խնամատարության խնդիրների, աշխատուժի ու մասնագետների պակասի և այլ գործոնների հետևանքով օրհասական վիճակում գտնվող երկրին ու ժողովրդին սատարելու նպատակով ՀՍԽՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1921 թ. սեպտեմբերի 15-ի դեկրետով ստեղծվեց «Հայաստանի օգնության կոմիտե» (ՀՕԿ) հասարակական կազմակերպությունը, որը, ըստ էության, Խորհրդային Հայաստանում ստեղծված առաջին համահայկական կազմակերպությունն էր: Նրա առաջին հիմնադիր ժողովը տեղի ունեցավ սեպտեմբերի 13-20-ը՝ Երևանում[1]:

Ըստ էության, ՀՕԿ-ը բացի Հայաստանի ազգաբնակչությանը նյութական օգնություն կազմակերպելուց, մեկ այլ կարևոր առաքելություն ևս ուներ, այն է՝ համախմբել երկրից դուրս գտնվող հայ մտավորականությանն ու կարող

[1] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 1, թթ. 1-10:

նիսի 10-ին, երկարատև և բուռն քննարկումից հետո որոշեց Ա. Հովհաննիսյանին ազատել առաջին քարտուղարի պաշտոնից: Միաժամանակ որոշվեց խնդրել «Անդրերկրկոմից ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի թեկնածու երաշխավորելու համար»[1]: Անդրերկրկոմի արձագանքը հետևեց անմիջապես. Աշոտ Հովհաննիսյանն ազատվեց քարտուղարի պաշտոնից և կանչվեց Անդրերկրկոմի տրամադրության տակ: Այդ ճակատագրին արժանացան նաև հակառակորդ խմբի անդամները՝ Ա. Շահուվարյանը, Ա. Եսայանը և Հ. Բանահյանը[2]: 1928 թ. մարտին ՀամԿ(բ)Կ կենտկոմի տրամադրության տակ է ուղարկվում Ս. Լուկաշինը, Երևանից Թիֆլիս է տեղափոխվում Ս. Համբարձումյանը, իսկ ապրիլի 5-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը Անդրերկրկոմի ներկայացուցիչներ Ռուբենի (Մկրտչյան) և Միխա Ցխակայայի մասնակցությամբ որոշում է ընդունում Անդրերկրկոմի նախագահության առաջարկությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Հայկ Հովսեփյանին աշխատանքից ազատելու մասին: Կենտկոմի քարտուղարը «վերջին ժամանակներում թույլ էր տվել սխալներ և վրիպումներ» դաշնակցության գաղափարախոսության, ինչպես նաև «սպեցիֆիզմի» վերապրուկների դեմ մղվող պայքարում[3]: ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Անդրերկրկոմի կողմից երաշխավորվել էր Հայկազ Կոստանյանը, որին նույն Անդրերկրկոմը 1922 թ. խմբակային պայքարի համար հեռացրել էր Հայաստանից:

Պլենումում Անդրերկրկոմի քարտուղար Ռուբենն օգտագործեց ցանկացած միջոց Հ. Կոստանյանին միաձայն ընտրելու համար, նրա խոսքերով՝ «Եթե այս պլենումը միահամուռ ընդունի (ընդգծ. մերն է - Ա. Վ.) կուսակցության երկրային կոմիտեի որոշումը, դա կբերի նրան, որ հետագայում Հայկոմկուսը կխմբավորի իր շարքերը և կսկսի նորմալ աշխատել և կառուցել սոցիալիստական տնտեսություն»[4]:

Այսպես հիմք դրվեց վերադասի որոշումները միահամուռ պաշտպանելու գործընթացին:

Սակայն կար մի հարց, որում միահամուռ էր կոմկուսի ողջ ղեկավարությունը՝ «աջերը» և «ձախերը», ավագ սերնդի ներկայացուցիչները և երիտասարդները, «սպեցիֆիկները» և «մաքուրները». դա եկեղեցու դեմ պայքարն էր: Խորհրդային ղեկավարության համար նույնիսկ վտանգ էր ամեն տարի ապրիլի 24-ին

[1] ՀԱԱ, ֆ.1, ց.7, գ.23, թ.49:
[2] ՀԱԱ, ֆ.1, ց.7, գ.54, թ.47-48:
[3] ՀԱԱ, ֆ.1, ց.8, գ.6, թ.20:
[4] ՀԱԱ, ֆ.1, ց.8, գ.6, թ.6:

եկեղեցիներում զանգերի ղողանջումը և ահա 1926 թ. օգոստոսի 31-ին Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը հանձնարարում է ՀԽՍՀ հողժողկոմ, Կաթողիկոսարանին կից Ժողկոմխորհի ներկայացուցիչ Արամայիս Երզնկյանին բանակցելու Կաթողիկոսարանի հետ դադարեցնելու ապրիլի 24-ին իրականացվող համաշխարհային պատերազմի զոհերի հիշատակի հարգման արարողությունները[1]: ՀԿ(բ)Կ կենտոմի նախագահությունն արդեն 1927 թ. փետրվարի 1-ին ստեղծում է եկեղեցական և հակակրոնական հարցերի մշտական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են Աշոտ Հովհաննիսյանը, Ալեքսանդր Շահսուվարյանը, Օնիկ Դուրգարյանը, Արամայիս Երզնկյանը, Սերգեյ Մելիք-Հովսեփովը[2]: Կանցնի ընդամենը տասը տարի և այս անաստվածները «ժողովրդի թշնամի» պիտակով կհայտնվեն իրենց իսկ ստեղծած համակարգի զնդաններում: Առաջինն ու վերջինն իրենց կյանքի մեկ ու կես տասնամյակը կանցկացնեն բանտերում և ճամբարներում, երկրորդը և երրորդը կգնդակահարվեն մեկ օրվա տարբերությամբ, իսկ չորրորդը կմահանա բանտում:

1928 թ. հուլիսին Կենտգործկոմի նախագահ Արտաշես Կարինյանը, որը նույնպես մեղադրվում էր «սպեցիֆիզմի» մեջ, հեռանում է Հայաստանից, և հանրապետությունում կուսակցական ու խորհրդային իշխանությունն Անդրերկրկոմի օգնությամբ ամբողջովին անցնում է մաքուր կենսագրությամբ աշխատողների ձեռքը (Սարգիս Կասյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Աղասի Խանջյան, Թադևոս Մանդալյան և ուրիշներ):

Որոշ ժամանակ խմբակային պայքարը դադարեց, սակայն այն նոր ուժով ծավալվեց 1930-ական թթ. սկզբներին: ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ընդունում է որոշում ԱՍԴԽՀ ղեկավար աշխատողների կազմը փոխելու մասին: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի տրամադրության տակ է կանչվում նաև Հ. Կոստանյանը: Մայիսի 7-ին տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը նշում է՝ Հ. Կոստանյանի ղեկավարությամբ «ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը վերջին երկու տարում տարել է հաջող պայքար աջ ազգայնական ժառանգության, աջ թեքման և նրա նկատմամբ հանդուրժողականության, տրոցկիստական խմբավորումների և «ձախ» տրամադրությունների դեմ, հսկայական ստեղծագործական աշխատանք է կատարել Հայկոմկուսի շարքերը համախմբելու կուսակցության գլխավոր գծի շուրջը, բոլշևիկյան կադրերի աճեցման, կուսակցական կազմակերպությունները տնտեսական շինարարության հասնում էր գագաթնակետին, և անհրաժեշտություն էր ծագում փոխել հանրապետության հերթական ղեկավարին, Հայաստանից հեռացնել պատասխանատու աշխատողների, որոնք մի քանի տարի հետո նորից հետ էին կանչվում: Ինչպես իր դիմումում գրել էր Ս. Կասյանը, «Անդրերկրկոմը կարծես թե շահագրգռված չէր նրանում, որ սերտ կապեր լինեին Անդրկովկասի հանրապետությունների միջև, որ այդ վերջիններս շնչեին միանման, ունենային միանման ռիթմ»[1]:

Հավելենք՝ Անդրերկրկոմի ղեկավարությունը երբեք հակամետ չի եղել համերաշխ ղեկավարություն ունենալ թե՛ Հայաստանում, թե՛ մյուս հանրապետություններում: Երկրամասն այդպես ղեկավարելն ավելի դյուրին էր:



Секретно.

ЦК ВКП(б)
товарищу СТАЛИНУ.

Иосиф Виссарионович !

В Армении,в районном центре - Вагаршапате находящемся в 10-12 клм.от границы до сих пор существует Эчмиадзинский монастырь,в котором находится резиденция армянского католикоса - существующая на средства присылаемые из-за границы армянским духовенством.

Имеющиеся в распоряжении ЦК КП(б)Армении материалы по делу предательского,бывшего руководства Армении -разоблачают антисоветскую деятельность католикосата и его работу по созданию дашнакских организаций в Армении.

Армянское духовенство-прикрываясь решениями и декларациями принятыми во время избрания католикоса -в своей лойяльности к советской власти,все время вело подрывную, шпионскую работу в Армении будучи связано с центрами контрреволюционных партий дашнаков,рамкавров и других "обществ " находящимися за-границей.

Недавно умерший католикос Хорен Нурадбекян -сам являлся активным членом дашнакской партии и по контрреволюционной работе был связан с Хандаляном,Тер-Габриеляном и другими членами право-троцкистского центра в Армении.

В 1937 году в Эчмиадзинском католикосате работало 70-75 чел.духовных лиц,большинство из которых были арестованы за активную,контрреволюционную работу.

В настоящее время в Эчмиадзинском католикосате осталась 7 человек -служителей религиозного культа,являющиеся дашнаками и антисоветски настроенными.

ЦК КП(б)Армении ,обсудив вопрос об Эчмиадзинском монастыре и католикосате решил,- ввиду того,что имеющиеся материалы изобличают Эчмиадзинский католикосат в активной борьбе против Советской власти и армянского народа -закрыть Эчмиадзинский монастырь,превратив его в музей,выборов нового католикоса не производить и ликвидировать центр армянского духовенства-Эчмиадзинский католикосат.

Просим ЦК ВКП(б) утвердить.

СЕКРЕТАРЬ ЦК КП(б)АРМЕНИИ
(АРУТЮНЯН ГР.).

г.Ереван.
4-VIII-1938 г.
№ 5586.

Խորհրդային Հայաստանի ղեկավար Գրիգոր Հարությունյանի գրությունը Ի. Ստալինին՝ հայ հոգևորականության դեմ ուղղված գործողությունների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը փակելու և թանգարանի վերածելու առաջարկի վերաբերյալ, 4 օգոստոսի, 1938 թ.

[1] ՀԱԱ, ֆ.1, ց.7, գ.6, թ.121:

[2] ՀԱԱ, ֆ.1, ց.7, գ.28, թ.8:

[1] ՀԱԱ, ֆ.1, ց.10, գ.11, թ.4:

քը, վերականգնել նախկինում վարած արոտավայրերը, ավելացնել գյուղական վայրերում կապիտալ ներդրումները, բարելավել հայրենադարձների կենցաղային պայմանները, դրա համար ստացված միջոցները ծախսել միայն այդ նպատակով:

Ա. Երզնկյանը թեպետ ազատվում է ժողկոմխորհի նախագահի տեղակալի պաշտոնից, սակայն մնում է կոմունալ տնտեսության ժողկոմի պաշտոնում: Անդրերկրկոմը որոշում է ուժեղացնել Հայաստանի ղեկավարությունը: Որոշվում է նախկինում Հայաստանից «արտաքսված» Ամատունուն (որպես կենտկոմի երկրորդ քարտուղար) և Ա. Շահսուվարյանին (որպես ժողկոմխորհի նախագահի տեղակալ) նորից ուղարկել Հայաստան[1]: Հանձնարարվում է Ս. Կուդրյավցևին՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում հանդես գալ Անդրերկրկոմի որոշման մասին:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերի 4-5-ի պլենումը խիստ քննադատեց Հայաստանից հեռացած Ս. Տեր-Գաբրիելյանին ու Ա. Երզնկյանին և պաշտպանեց Ա. Խանջյանին: Սակայն Երզնկյանը ոչ միայն չհեռացվեց կուսակցության շարքերից, որի վերաբերյալ պլենումում առաջարկ եղավ, այլև վերընտրվեց բյուրոյի անդամության թեկնածու, որովհետև «ընկեր Բերիան այդ հարցի մասին ասել էր. Երզնկյանն իր դիմումում գրում է, որ այն մարդկանց, որոնք փորձում են բացահայտել ղեկավարության թերությունները կամ քննադատել նրա աշխատանքը, անմիջապես վռնդում են Հայաստանից, ենթարկում հետապնդումների: ....Մենք ձեզ թողնում ենք բյուրոյում՝ հերքելով նաև ձեր այդ պնդումը: ....Մենք ձեզ ոչ միայն չենք վռնդում Հայաստանից, այլ թողնում ենք և կստիպենք կատարել Անդրերկրկոմի որոշումները, իսկ եթե չկատարեք, կվռնդենք կուսակցությունից»[2]:

Չի անցնի մեկ տարի, և սպանված Ա. Խանջյանը ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամների կողմից կբնութագրվի «երկերեսանի-ազգայնական, հայ ժողովրդի ամենաոխերիմ թշնամի, դաշնակցության լրտես»:

Ամփոփենք: Անդրդաշնության գոյության ամբողջ ընթացքում Հայաստանի թե՛ կուսակցական, թե՛ խորհրդային ղեկավար շրջանակներում եղել է խմբակային պայքար (1922 թ., 1927 թ., 1928 թ., 1930 թ., 1935 թ.), որը հաճախ շեղել է հանրապետության ղեկավարության ուշադրությունը տնտեսական և մշակութային խնդիրներից: Իսկ Անդրդաշնության ղեկավարները կարծես թե լրջորեն չէին զբաղվում Հայաստանով: Նրանց ձեռնտու էր այդ վիճակը, այն նույնիսկ լռելյայն խրախուսվում էր: Այս առումով հատկանշական է, որ նրանք Երևան էին ժամանում լոկ այն ժամանակ, երբ հակամարտության և գյուղի սոցիալիստական վերակառուցման հարցերի շուրջը մոբիլիզացնելու ուղղությամբ»[1]:

Անդրերկրկոմի երաշխավորությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար է ընտրվում Աղասի Խանջյանը:

Այս որոշմանը, սակայն, ոչ բոլորն էին համաձայն, հատկապես՝ կուսակցական հին կադրերը (Սարգիս Կասյան, Սահակ Տեր-Գաբրիելյան): Արդեն հունիսի վերջին-հուլիսի սկզբին՝ ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարի աշխատանքի օրերին, Ս. Տեր-Գաբրիելյանը Ստալինի առաջ հարց է բարձրացնում իրեն Հայաստանից ետ կանչելու մասին: Պատասխանը միանշանակ էր՝ «Աշխատի՛ր, և վերջ»[2]:

Նույն թվականի աշնանը պարզվում է, որ բանվորների նյութական դրությունը բարելավելու մասին իր ելույթներում Անդրերկրկոմի քարտուղար Վիսարիոն Լոմինաձեն հանդես է բերում հակակուսակցական գիծ: Անդրկովկաս է գործուղվում քաղբյուրոյի անդամ Սերգեյ Կիրովը, լինում է Անդրկովկասի հանրապետությունների մայրաքաղաքներում: Նոյեմբերի 21-ին Երևանում կայացած ՀԿ(բ)Կ Կենտկոմի, ԿՎՀ, Երևանի կոմիտեի և քաղաքային ակտիվի միացյալ նիստում Կիրովը հանդես է գալիս «Ներկուսակցական դրությունը» զեկուցումով: Կասյանն իր ելույթում նշում է, որ կուսակցության մեջ կոլեկտիվ ղեկավարությունն աստիճանաբար փոխարինվում է միանձնյա ղեկավարությամբ, կուսակցության շարքերում թուլանում է քննադատությունն ու ինքնաքննադատությունը, հին բոլշևիկներից շատերը հեռացվում են աշխատանքից[3]: Այդ ելույթը փաստորեն կրկնությունն էր այն նամակի, որը նոյեմբերի 13-ին նա ուղարկել էր Թիֆլիս՝ Ս. Կիրովին, պատճենը՝ Ստալինին և Օրջոնիկիձեին[4]: Այդ տագնապալից ահազանգն ուշադրության չարժանացավ, ավելին՝ գնահատվեց որպես «աջ-օպորտունիստական»[5]:

Հաջորդ օրը Կիրովի ներկայությամբ կայացավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի ընդլայնված նիստ: Հայաստանի ղեկավարների ելույթները լի էին փոխադարձ մեղադրանքներով: Ա. Խանջյանն իր ելույթում բազմաթիվ թվային տվյալների վկայակոչմամբ ջանում էր ցույց տալ, որ Հայաստանում սոցիալիստական շինարարությունն գտնվում է վերելքի փուլում, Ս. Տեր-

[1] ՀԱԱ, ֆ.1, ց.15, գ.52, թ.87-89:

[2] ՀԱԱ, ֆ.1, ց.15, գ.4, թ.62:

[1] ՀԱԱ, ֆ.1, ց.10, գ.8, թ.1:

[2] ՀԱԱ, ֆ.1, ց.10, գ.13, թթ.14, 34:

[3] ՀԱԱ, ֆ.1, ց.10, գ.28, թ.36-44:

[4] ՀԱԱ, ֆ.1, ց.10, գ.11, թ.2-5:

[5] ՀԱԱ, ֆ.1, ց.10, գ.28, թ.47:

Գաբրիելյանը նորից պնդում էր իրեն աշխատանքից ազատելու մասին, Ս. Կասյանը փորձում էր բացատրել, որ իր նախորդ բանավոր ելույթը ճիշտ չեն հասկացել[1]:

Անդրերկրկոմը չհապաղեց. գործելով հին մեթոդներով՝ նրա նախագահությունը դեկտեմբերի 4-ին քննարկում է Հայկոմկուսում ստեղծված դրությունը և որոշում է աշխատանքից ազատել Ս. Կասյանին, կենտկոմի երկրորդ քարտուղար Ամատունի Ամատունուն, ԿՎՀ-ի նախագահ Թադևոս Մանդալյանին, մի խումբ այլ աշխատողների (Մուշեղ Զալյան, Գևորգ Հանեսօղլյան, Գուրգեն Քալաշյան)[2]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարության աշխատանքներում կարծես նորից հանդարտություն է տիրում, բայց այն խաբուսիկ էր: 1931-1935 թվականներին ՀԿ(բ)Կ Կենտկոմի երկրորդ քարտուղարի պաշտոնում միմյանց փոխարինում են 5, ֆինանսների ժողկոմի պաշտոնում՝ 5, հողժողկոմի պաշտոնում՝ 4, լուսժողկոմի պաշտոնում՝ 6 հոգի:

1935 թվականի սկզբներին արդեն պարզ էր, որ Ս. Տեր-Գաբրիելյանը և Ա. Խանջյանը միասին աշխատել չեն կարող: Մյուս կողմից՝ խիստ լարված էին հարաբերությունները Անդրդաշնության ղեկավար Լավրենտի Բերիայի և Սահակ Տեր-Գաբրիելյանի միջև: Այդ էլ պատճառ դարձավ, որ 1935 թ. փետրվարի 5-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը Ս. Տեր-Գաբրիելյանին ազատի ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահի պաշտոնից: Տեր-Գաբրիելյանը Հայաստանից հեռանում է[3]: Անվանի պետական գործչի աշխատանքից ազատումը լայն արձագանք ստացավ հանրապետությունում (հատկապես՝ մտավորականության շրջանում) և արտերկրում: Սփյուռքի թերթերը գրում էին. «Սահակի՝ Հայաստանից հեռանալով հեռանում է վերջին հեղափոխական բոլշևիկը, և այժմ այդ դժբախտ երկրի ղեկը ամբողջովին անցնում է հայ չեկիստների ձեռքը՝ Խանջյանի գլխավորությամբ», կամ՝ «Հեռացավ վերջին հայը, որի հետ Մոսկվան հաշվի էր նստում, որը կարող էր, հակառակ Անդրերկրկոմի, հայ ժողովրդի շահերի համար ինչ-որ բան անել»[4]: Նույն թվականի օգոստոսի 2-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Արամայիս Երզնկյանը դիմում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմ՝ Ստալինին, և Անդրերկրկոմ՝ Բերիային՝ ահազանգելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանի աշխատանքներում տեղ գտած սխալների և թերությունների մասին: Մեղադրելով նրան

[1] ՀԱԱ, ֆ.1, ց.10, գ.28, թ.13:

[2] ՀԱԱ, ֆ.1, ց.10, գ.8, թ.27-28:

[3] ՀԱԱ, ֆ.1, ց.15, գ.9, թ.83:

[4] ՀԱԱ, ֆ.1, ց.15, գ.14, թ.18:

գյուղատնտեսության սխալ պլանավորման (Հայաստանում բամբակի և այլ ցանքատարածությունների ավելացում՝ ի վնաս խաղողի և անասնապահության), տնտեսական գործունեության մեջ հակապետական երևույթների, գաղափարական ճակատում «աջ» և «ձախ» սխալների համար՝ մատնանշվում էր Խանջյանի՝ հատկապես որպես քարտուղարի անկարողությունը և երկերեսանի քաղաքականությունը, որը, ըստ Երզնկյանի, արտահայտվել էր նաև Ս. Տեր-Գաբրիելյանի աշխատանքից հեռանալու մեջ[1]: Շուտով Բերիային ուղղված համանման դիմումով հանդես է գալիս նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամ Արսեն Եսայանը: Դիմումներում բարձրացված խնդիրներն ուսումնասիրելու համար Անդրերկրկոմն ստեղծում է հանձնաժողով՝ երկրային կոմիտեի քարտուղար Սերգեյ Կուդրյավցևի ղեկավարությամբ: Սեպտեմբերի 18-ին Երևանում հանձնաժողովի անդամների մասնակցությամբ տեղի է ունենում ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի փակ նիստ, որտեղ քննարկվում են դիմումները: Ա. Խանջյանի պաշտպանների դերում հանդես են գալիս երկրորդ քարտուղար Ստյոպա Ակոպովը, Միքայել Ենգիբարյանը, Խաչիկ Մուղդուսին, Լևոն Արիսյանը, ովքեր քննադատում են դիմում գրողներին, հակառակ կողմում՝ Սերգո Մարտիկյանը և Արտավազդ Եղիազարյանը: Հայաստանից հեռացած Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Երզնկյանը, Ա. Եսայանը որակվում են «ազգայնականներ», իսկ վերջիններիս արարքը՝ «քաղաքական սխալ»[2]: Նիստի վերջում Անդրերկրկոմը Ա. Խանջյանից, Ժողկոմխորհի նախագահ Աբրահամ Գուլոյանից և Ստյոպա Ակոպովից պահանջում է գրավոր բացատրություն նրանց դեմ ուղղված մեղադրանքների մասին: Կարծես թե Բերիայի ձեռքին ամեն ինչ կար Խանջյանի հարցը լուծելու համար: Սակայն այս անգամ Բերիան որոշում է փրկել Խանջյանին՝ մեկ տարի անց հարցն արմատապես լուծելու համար: Հետագայում կուսակցությունից հեռացվելու ժամանակ, Ա. Երզնկյանը խոստովանել է. «Այդ օրերին խոսում էինք, թե ինչպես պատահեց, որ Խանջյանին հովանավորեցին, որ նրան պաշտպանեցին, իսկ մեզ ջարդեցին»[3]:

Անդրերկրկոմի բյուրոյի սեպտեմբերի 23-ին կայացած նիստում թեև Խանջյանի հանդեպ ուղղված մեղադրանքները համարվեցին ոչ ճիշտ, անհիմն, անթույլատրելի և զրպարտիչ, սակայն Հայաստանի ղեկավարությանը տրված հանձնարարականներից հետևում է, որ դրանք այնքան էլ անհիմն չեն եղել: Ընդունված որոշման մեջ, մասնավորապես, հանձնարարվում էր 1935-37 թթ. Հայաստանում ավելացնել խաղողի այգիների տարած-

[1] ՀԱԱ, ֆ.4, ց.2, գ.2637, թ.162:

[2] ՀԱԱ, ֆ.1, ց.15, գ.14:

[3] ՀԱԱ, ֆ.91, ց.3, գ.2278, թ.10: